№ 86 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 25 ԱՊՐԻԼԻ

1912

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 25 ԱՊՐԻԼԻ № 86

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Կայարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲ.

Մայիսի 1-ից մինչև յունիսի 1-ը 85 կոպ.:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Վաղը, հինգշաբթի, ապրիլի 26-ին,

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ

մահվան քառասնօրեակին Վանքի մայր-եկեղեցում կը մատուցվի պատարագ, որից յետոյ հանգուցեալի գերեզմանի վրա տեղի կունենայ հոգեհանգիստ: Այդ մասին Գ. Սունդուկեանի ընտանիքը յայտնում է հանգուցեալի յիշատակը յարգողներին: Պատարագի սկիզբը առ. ժամը 11-ին, իսկ հոգեհանգստը ժամը 12-ին:

280. 2—1

Ախալցխայի հայոց ս. Փրկիչ եկեղեցու Հոգաբարձութիւնը յայտարարում է, որ ներկայ տարվայ մայիսի 13-ին, ցերեկվայ ժամը 12-ին, հոգաբարձական գրասենեակում նշանակված է ԱՃՈՒՐԴ առանց կրկնաճուրդի, կապալով տալու ս. Փրկիչ եկեղեցու Ախալքալաքի գաւառում գտնված Կարզախ և Սուլդա գիւղերի արօտատեղերը և Խաւէթ ու նոյն գիւղերի հացելի տասանորդի եկամուտները: Ցանկացողները պայմանների մասին կարող են տեղեկանալ մինչև աճուրդի օրը, դիմելով Հոգաբարձութեան գրաւոր կամ անձամբ:

Նախագահող՝ Ստ. Ստեփանեան
Քարտուղար Ս. Ճղմաճեան

(ա. օ.) ատ 276. 3—3

ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ „ՄՇԱԿ" ԼՐԱԳՐԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿԻ" ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱԼՄԱՆԱԽԻ

Բացառիկ ստուար № «Տարազի», որ լոյս է տեսնելու «ՄՇԱԿԻ» ՅՈԲԵԼԵԱՆԻ նախօրեակին:

Այս հոյակապ հանդէսը բաժանված է 10 շրջանի: I. «ՄՇԱԿԸ» 1872 թւին: «ՄՇԱԿԻ» առաջին ամբողջ №-ը fac-similé. Գրիգոր Արծրունին և իր աշխատակիցները, խմբագրական կազմը: Կուլիսների ետև (պատմութեան այժմս սեփականութիւն): II. «ՄՇԱԿԸ» 1872—1877 թ., III. «ՄՇԱԿԸ» 1878—1882 թ., IV. «ՄՇԱԿԸ» 1883—1887 թ., V. «ՄՇԱԿԸ» 1888—1892 թ., VI. «ՄՇԱԿԸ» 1893—1897 թ., VII. «ՄՇԱԿԸ» 1898 1902 թ., VIII. «ՄՇԱԿԸ» 1903—1907 թ., IX. «ՄՇԱԿԸ» 1908—1912 թ., X. ՓԱՅԼՈՒՆ ՅՈԲԵԼԵԱՐ «ՄՇԱԿԸ»:

Կենսագրական «ՄՇԱԿԻ» (ժամանակագրական): Ընդհանուր հայհացք: «ՄՇԱԿԸ» և Թիւրքահայոց հարցը: «ՄՇԱԿԸ» և կանանց խնդիրը: «ՄՇԱԿԸ» և գիւղը: «ՄՇԱԿԸ» և քաղաքը: «ՄՇԱԿԸ» և եկեղեցին ու կրօնը: «ՄՇԱԿԸ» և այլադաւան հայերը: «ՄՇԱԿԸ» և մեր այլացեղ, այլազգի դրացիները: «ՄՇԱԿԸ» և Կովկասը: «ՄՇԱԿԸ» և Ռուսաստանը: «ՄՇԱԿԸ» և Եւրոպան: «ՄՇԱԿԸ» և պարսկահայը, Թիւրքահայը: «ՄՇԱԿԸ» և հայկական գաղութները: «ՄՇԱԿԸ» և դպրոցը, գրականութիւնն ու մամուլը: «ՄՇԱԿԸ» և արուեստները՝ թատրոն, երաժշտութիւն, նկարչութիւն և այլն: «ՄՇԱԿԸ» և աղէտները՝ սով, ժանտախտ, հրդեհ, կոտորած: «ՄՇԱԿԸ» և բարեգործութիւնն ու ինքնօգնութիւնը: «ՄՇԱԿԸ» և ազատութիւնը: «ՄՇԱԿԸ» և աշխատանքը: ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ և յեղափոխութիւնը: ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ և ՐԱՖՖԻՆ: «ՄՇԱԿԸ» և իր ոյժը, նշանակութիւնը, դիրքը, կատարած դերը:

Յիշողութիւններ: Էպիզօդներ: Առասպելներ, ինսինուացիաներ «ՄՇԱԿԻ» մասին: Եզրակացութիւն: Մտքի յաղթանակը: Փայլուն յոբելեար «ՄՇԱԿԸ»:

ԱՆՀԱՄԱՐ ՆԿԱՐՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ, որոնց մի մասը տպագրվում է արտասահմանում: ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ, ՐԱՖՖՈՒ և «ՄՇԱԿԻ» այժմեան ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ մեծադիր գոյնզգոյն պատկերները՝ տպագրված ընտիր. կարելի է դնել և շրջանակների մէջ:

Քառասնամեայ „ՄՇԱԿԻ" աշխատակիցների, մշտական և յատուկ թղթակիցների պատկերները:

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ վերջին լուսանկարը՝ խմբանկար, լուսանկարված մահից մի քանի ամիս առաջ և սեփականութիւն «ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ», դեռ ոչ մի անգամ չը տպագրված: Fac-similé-ներ Գրիգոր Արծրունու, Րաֆֆու, Հայկակի, և այլն, և այլն: «ՄՇԱԿԻ» արդի խմբագրատունն ու խմբագրութիւնը: «ՄՇԱԿԻ» յոբելեանական յանձնաժողովի և արդի աշխատակիցների, թղթակիցների խմբանկարները, և այլն, և այլն:

Բաժանորդագինը

„ՄՇԱԿԻ" ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱԼՄԱՆԱԽԻ մինչև ներկայ ապրիլի 15-ը «ՄՇԱԿԻ» բաժանորդների համար ՄԷԿ րուբլի, այնուհետև մինչև մայիսի 20-ը՝ ԵՐԿՈՒ րուբլի, իսկ լոյս տեսնելուց յետոյ՝ ԵՐԵՔ րուբլի: Նրանք, որոնք բաժանորդ չեն «ՄՇԱԿԻՆ», վճարում են 50 կ. աւելի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ բաժանորդների համար մինչև մայիսի 20-ը 10 ֆր.: կը ստանան յատուկ խողովակների մէջ:

Մելովի ամենաընտիր թղթի վրա հատը 10 ր. (25 ֆր.): Տպվելու են շատ սահմանափակ օրինակներ:

Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում:

Դիմել՝ ТИФЛИСЪ, БЮРО ПЕЧАТИ, Головинскій пр., 41.
Արտասահմանից՝ DIRECTION TARAZ, TIFLIS. 26. 0—6

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Համալի Մալախարնիրը

Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
Գինն է 30 կոպ.

Այս գրքի վաճառումից գոյանալիք գումարը յատկացվելու է «ՄՇԱԿԻ» ապահովութեան ֆօնդին:

Հասցէն՝ Тифлисъ, Ред. газ. „Мшакъ", կամ Tiflis, Rédaction du journal arménien „Mschak",

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ:

Պրոֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում:

Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.

Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.
(կ.չ.ու.). աա. 179. 100—14

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

ԶՈՒԲԱԼՈՎԻ ԱՆՈՒԱՆ
Ժողովրդ. ներկայացումներ կազմակերպող
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ
Այսօր, չորեքշաբթի, ապրիլի 25-ին
ՀԱՅՈՑ ԴՐ. ԸՆԿ. ԹԱՏԵՐԱՍԷՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ
Մասնակցութեամբ դերասանների
կը տայ
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ
յիշատակին նուիրված
(Քառասունքի առիթով)
ԵՐՐՈՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽ

Կոմեդիա 3 արար., հեղ. Գ. Սունդուկեանի

Մասնակցում են՝ տ. տ. Աբովեան-Ցիցիանովա, Արաքսեան, Արուսեակ, Մանուչարեան, Յասմիկ, Սաթենիկ, Ս.-Վարդիթեր, պ. պ. Արաքսեան, Գրիգորեան, Պօղոսեան, Տէր-Առաքելեան, Տէր-Գրիգորեան, Տէր-Յովհաննիսեան, Փիրումեան և ուրիշներ:

Սկիզբն է երեկոյեան ճիշդ ժամը 8½-ին:

Տեղերի գները 5—50 կոպ.:

Ռեժիսոր՝ Արաքսեան
Հերթ. կարգադրիչ՝ Վ. Գալստեան
280. 1—1

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Մեր գաւառական հայ մամուլը տարօրինակ կացութեան մէջ է գտնվում և տարօրինակ ուղղութիւն ունի:

Այժմ գաւառում՝ Երևան, Ալեքսանդրապոլ, Շուշի, Նոր-Նախիջևան՝ հրատարակվում են հայ թերթեր, թւով հինգ:

Գաւառական մամուլի երևումը պէտք է ողջունել ընդհանրապէս, որովհետև դա նշան է, թէ գաւառում կազմակերպվում է ինտելիգենցիա, մտածող երիտասարդութիւն, թէ գաւառում ևս առաջ է գալիս արթնացումն, մտաւոր ինտենսիվ կեանքի պահանջ:

Բայց ողջունելով հանդերձ այդ երևոյթը, պէտք է աշխատել, որ գաւառական մամուլը հաւատարմութեամբ ծառայէ այն նպատակին, որ նրա raison d'être-ը, նրա նշանաբանը պէտք է լինի:

Արդ, ինչ պէտք է լինի գաւառական մամուլի raison d'être-ը և նպատակը:

Նրա ամենագլխաւոր նպատակը պէտք է լինի՝ գաւառի, բուն երկրի ուսումնասիրութիւնը, զբաղվելը այն հարցերով, որոնցով ընդհանուր կամ կենդրոնի մամուլը չէ կարող կամ միջոց և հնարաւորութիւն չունի նախամեծարապէս զբաղվելու և իր քննութեան առարկայ դարձնելու:

Երբ Շուշում, Երևանում, Ալեքսանդրապոլում հրատարակվում է մի հայ թերթ, մեր կարծիքով, այդ թերթի առաջին պարտականութիւնը և կոչումը պէտք է լինի տեղական ժողովրդի՝ Ղարաբաղի, Երևանի, Ալեքսանդրապոլի շրջանների ժողովրդի և երկրի ուսումնասիրութիւնը զանազան տեսակէտներով՝ տնտեսական, կրթական, սօցիալական, արդիւնաբերական, առևտրական, երկրագործական, նոյնիսկ հնագիտական և այլն:

Գաւառական մամուլը, իբրև տեղական կարիքներին և պահանջներին աւելի մօտ կանգնած, աւելի միջոց և հնարաւորութիւն ունի պարզելու, բացատրելու իրերի իսկական վիճակը, ցոյց տալով գաւառը կրծող, մաշող խնդիրը և վէրքերը: Գաւառական մամուլն է, որ պէտք է առատ նիւթ և պաշար հայթայթէ ընդհանուր մամուլին և ժողովրդի բարօրութեան համար տքնող գործիչներին՝ ընդհանուր եզրակացութիւնների կամ այն ծրագիրների իրագործման համար, որոնք կազմվում են յատկապէս այս և այն գաւառին վերաբերեալ որևէ օրէնսդրութիւն անցկացնելու մտքով: Գաւառական մամուլը պէտք է ճիշդ հայելին լինի գաւառի կեանքի, ցաւերի և կարիքների. նա պէտք է առաջին արձագանքը տայ նրանց:

Դրա փոխարէն մենք բոլորովին այլ պատկեր ենք տեսնում: Վերցրէք «Ղարաբաղ», «Կռւան», «Սրադած» թերթերը և դուք կը տեսնէք, որ նրանք նախամեծարապէս զբաղվում են ընդհանուր հարցերով—քաղաքական, գրական, սօցիալական, քաղաքատնտեսական, և գաւառի ուսումնասիրութեան գործը նրանց համար երկրորդական տեղ է բռնում:

Բայց չէ որ գաւառական թերթերը, ունենալով աւելի քիչ թւով բաժանորդներ և միջոցներ, չը լինելով ապահովված, անկարող լինելով վարձատրել գրողներին, չեն կարող լուրջ կերպով զբաղվել այդպիսի հարցերով, և նրանց գրածը յաճախ կրկնութիւն է լինում, յաճախ անշնորհք կրկնութիւն այն ամենի, որի մասին խօսել, որոճացել է կենտրոնի մամուլը:

Գաւառական մամուլը չէ կատարում իր իսկական կոչումը և պաշտօնը:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

23 ապրիլի

Լիվադիա.—Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդորօվնայի անուանակոչութեան մեծահանդէս օրվայ առիթով Լիվադիայի Պալատի եկեղեցում մատուցվեց պատարագ: Աստուածպաշտութեանը ներկայ էին Կայսրը, Կայսրուհին, Գահաժառանգը, Օգոստափառ Դուստրները, Մեծ Իշխաններ Նիկոլայ Նիկոլաեվիչ և Դմիտրի Պաւլովիչ, նաև շքախմբի տիկնայք, Պալատի մինիստրը, շքախմբի անձինք, մինիստրները, բարձրաստիճան պաշտօնեաներ, զօրամասերի հրամանատարներ և հրաւիրված պաշտօնեաներ: Պատարագից առաջ Պալատի դիմաց կայացաւ զօրահանդէս Բարձրագոյն ներկայութեամբ: Զօրքերին հրամանատարում էր գեներալ Դումբաձէն: Պատարագից յետոյ Պալատի մեծ սեղանատանը կայացաւ նախաճաշ Կայսրի ներկայութեամբ, որին հրաւիրված էին 150 անձեր:

Պաշտօնական: Ապրիլի 21-ին պալատական եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց Բարձրագոյն ներկայութեամբ Լէյխտէնբերգի իշխան Գէօրգի Ռօմանովսկու յիշատակին:

Պետերբուրգ.—Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդորօվնայի անուանակոչութեան մեծահանդէս օրը մայրաքաղաքը զարդարված էր դրօշակներով: Բոլոր եկեղեցիներում կատարվեցին հանդիսաւոր պատարագներ, նաև՝ զօրամասերում, բարեգործական և կրթական հաստատութիւններում: Առանձին շուքով մատուցվեց պատարագը Կազանի տաճարում, ուր հանդիսադիրն էին Մոսկվայի և Կիէվի միտրոպօլիտները սինօդի անդամների մասնակցութեամբ: Պատարագին ներկայ էին Իշխան Իոան Կօնստանտինովիչը, Պետական Խորհրդի անդամները նախագահ Ակիմովի գլխաւորութեամբ, Դումայի անդամներ, ներքին գործերի մինիստրը, սինօդի օբէրպրօկուրօրը, զօրականներ, պալատական պաշտօնեաներ, զօրքի և նաւատորմի օֆիցէրներ: Մաղթանքի ժամանակ պարպվեցին թնդանօթներ: Երեկոյեան մայրաքաղաքը հրավառված էր:

Ռուսաստանի զանազան քաղաքներից և արտասահմանից նոյնպէս հեռագրում են հանդիսաւոր պատարագների մասին:

Թէմիր-Խան-Շուրա.—Այսօր հանդէսով բացվեց առաջին գիւղատնտեսական ցուցահանդէսը Դաղստանում: Սենատոր Վատացիի նախագահութեամբ կայացաւ խորհրդակցութիւն Դաղստանի գիւղատնտեսութիւնը բարելաւելու մասին:

Պետրովսկ (Դաղստանի շրջ.)—Փոխարքան դիմեց Պետերբուրգ:

Լոնդոն.—Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնան և անգլիական թագաւորական զոյգը օգոստափառ զաւակների հետ, Թագուհի Ալեքսանդրան, Մեծ Իշխանուհի Օլգա Ալեքսանդրօվնան, պրինց Պեօտր Օլդէնբուրգսկին առաւօտեան մեկնեցին Վինդզորի ամրոցը ներկայ լինելու Էդուարդ Թագաւորի մահվան տարեդարձի առիթով պալատական եկեղեցում կայանալիք պատարագին:

Վիէննա.—«Նէյէս-Վինէր-Տագէբլատը» ասել է Կ. Պօլսի իր թղթակցի խօսակցութիւնը արտաքին գործերի մինիստրութեան քաղաքական բաժանմունքի կառավարչի հետ: Վերջինս յայտնել է, թէ Բ. Դուռը ամեն բան անում է Բալկանեան պետութիւնների հետ բարեկամական յարաբերութիւններ վերականգնելու համար. դեռ ևս չը լուծված վիճելի հարցերը գտնվում են խաղաղ լուծման նախօրեակին, Թիւրք-բուլղարական սահմանի կարգաւորումը ընթանում է նորմալ. Նախատեսված է լուծել ճանապարհների, հպատակութեան, յանցագործներին յանձնելու խնդիրները: Սերբիայի հետ տիրում է լիակատար համաձայնութիւն: Չեռնոգորիայի հետ յարաբերութիւնները բարելաւվում են: Յունաստանի վերաբերութեամբ նախկին լարված դրութիւնը չքացել է: Մակեդոնիայի նախկին գեներալ տեսուչ Հիլմի փաշան միևնոյն խնդրի մասին ասել է, որ բալկանեան համաձայնութեան հարցը չէ կարելի բաժանել Թիւրքիայի այն ընդհանուր դրութիւնից, որ ունի նա դէպի մեծ պետութիւնները բալկանեան պետութիւնների նկատմամբ. Թիւրքերը Արևելքում հանդիսանում են հանգիստ տարր. Նրանք արթուն պահպան են եւրոպական խաղաղութեան, սակայն այդ պարտականութիւնը կարող են գործադրել միմիայն ուժեղ զօրք ունենալով. ուստի և մեծ պետութիւնները պէտք է թոյլ տան համաձայն պարիզեան դաշնադրութեան ամրապնդել Թիւրքիայի ֆինանսական մասը:

Պարիզ.—Ամբողջ Ֆրանսիայում երէկ տեղի ունեցան քաղաքային խորհուրդների ընտրութիւնները: Ոչ մի լուրջ միջադէպ չեղաւ: Պարիզում ընտրվեց նախկին կազմը: Հաղորդում են, որ ընտրութիւնները փոփոխութիւն չը մտցրին կուսակցութիւնների փոխադարձ յարաբերութեան մէջ:

Արտաքին գործերի նախկին մինիստր Դեսէլվը հերքում է լրագիրների այն տեղեկութիւնը՝ թէ իբր նա գործեց անկախօրէն, չը խորհրդակցելով կաբինէտի մնացած անդամների հետ այն հարցում՝ թէ ցանկալի է, որպէսզի մարօկկեան սուլթանը հրաժարվէ գահից:

Նիւ-Եօրկ.—Հազարաւոր սուֆրաժիստուհիներ և կանանց իրաւահաւասարութեանը կողմնակից տղամարդիկ հսկայական երթ կազմեցին: Մի քանի հարիւր հազար ականատեսներ ծաղրում էին հանդիսաերթը, առանձնապէս չին կանանց պատգամաւորութեան, որ նստած բաց կառքի մէջ՝ բռնած ունէր չինական հանրապետութեան դրօշակը:

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

Ուրգա.—Իւանշիկայի երեք անգամ յամառ պահանջը՝ Ուրգա ուղարկել յատուկ լիազօրներ՝ մօնղոլների հետ հանրապետութիւնը ճանաչելու առիթով բանակցելու համար, խութուխտան մերժեց, խորհուրդ տալով Իւանշիկային դիմել Ռուսաստանի միջնորդութեանը:

Մօնղոլները դպրոց են հիմնում ռուսական լեզուն սովորելու համար:

Մուկդէն.—Իւանշիկայի գործակալները շրջագայում են Մանջուրիայի քաղաքները միապետական համակրանքները պարզելու և յօգուտ հանրապետութեան ագիտացիա մղելու համար: Գործակալները միտինգներում յորդորում են կտրել ծամերը, վերցնել Դայցինի տան հպատակութեան դրօշները: Ագիտացիան պաշտպանում են իշխանութիւնները և հանդիպում է չին ազգաբնակութեան համակրանքին:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՃՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

23 ապրիլի

Լօնդօն.—«Թայմսին» հեռագրում են Թէհրանից, որ 200 աւղանցի անցան պարսկական սահմանը Եզդի մօտերը: Անցնելու է ուրիշ աւելի ուժեղ զօրախումբ:

Թէհրան.—Համադանից Ֆարման-Ֆարմայի զօրամասի դրութեան մասին ստացվող յուզալի տեղեկութիւնների պատճառով կառավարութիւնը փութով Համադան է ուղարկում Եփրեմին:

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

23 ապրիլ

Կ. Պոլիս.—Դրաւելով անպաշտպան Կալիցա փոքր կղզին, Ռոդոսից 17 կիլօմետր հեռաւորութեան վրա, իտալացիք զօրք իջեցրին Ռոդոսում, ռմբակոծելով թիւրքական մարտկոցները։ Բերդապահ զօրքերը ցոյց են տալիս լուրջ դիմադրութիւն։ Կռիւը շարունակվում է։

Դարդանէլը ականներից մաքրելուն արգելք է լինում վատ եղանակը։ Նեղուցը դեռ փակ է։

Ռոդոս.—Թիւրքաց զօրամասը ապրիլի 21-ի ամբողջ օրը մի շարք պարտութիւններ կրեց և գիշերը անցաւ երկրի ներսը։ Իտալացիները կորցրին մի ըսպանված և վեց վիրաւոր. Թիւրքերը 33 սպանված և 48 վիրաւոր։ 57 Թիւրք գերի ընկան։ Երէկ կղզու կառավարիչը յօժարական անձնատուր եղաւ։ Իտալացիք քաղաք մտան։

Օդեսսա.—Նաւագնացութեան ու առևտրի ռուսական ընկերութեան մէջ տեղեկութիւն է ստացվել, թէ Դարդանէլը ապրիլի 28-ից շուտ չի բացվի։

Հռոմ.—«Տրիբունային» հաղորդում են Աթէնքից, որ Սամոսի ազգաբնակութիւնը կը յայտարարէ, թէ կղզին միացած է Յունաստանին։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Բովանդակութիւնը.—Գողը գողէն գողացաւ, Աստուած տեսաւ զարմացաւ.—Պ. Զաւարեան գուժկան.—Կատակերգութիւն մը, որ ողբերգութիւն ըլլալ կը սպառնայ։

Կ. Պոլիս, 13/26 ապրիլ

Օսմ. խորհրդարանի ընտրութիւնները աւարտեցան և բացումը կատարուեցաւ ապրիլ 5-ին սովորական հանդիսաւորութեամբ՝ առանց սակայն ժողովրդային խանդավառութեան։

Հիմա խորհրդարանը իր սովորական նստաշրջանին յատուկ գործերուն միջամուխ ըլլալու և օրինական նիւթ կազմելու համար կը սպասէ մեծամասնութեան, որ սակայն տակաւին լրացած չէ, հետևաբար առժամապէս նիւթ գումարուած չունի։

Սակայն մինչև խորհրդարանի գումարումը թերևս աւելորդ չըլլայ խօսիլ վերջին անգամ մըն ալ ընտրութեան եղանակին վրայ ընդհանրապէս, հասկցնելու համար թէ ինչ է սահմանը Թիւրքիոյ սահմանադրութեան։

Կատարուածը... ընտրութիւն մը չէր, այլ կատակերգութիւն մը։

Քուէարկութեան փոխարէն կատարուեցան անուանումներ։

Երբեմն Համիդ, իր Եըլդըզին որջին ամրացած, կը կատարէր շարունակ անուանումներ... իր բէնդէգաններուն համար, մին պետական խորհրդական, միւսը մաքսային ժողովի անդամ, և ուրիշ մը ատոր պէս անգոյ պաշտօններու կոչելով. հիմա իր յաջորդն, երիտասարդ-թիւրք կոմիտէն, այդ պզտիկ Համիդներու փոխմակը, Նուրի-Օսմանիէի իր որջին մէջ կծկտած, կը կատարէ անուանումներ իր հաւատարիմներուն համար, մէպուսութեան ազդոյ ու անուանական պաշտօնին համար։

Ապա ժողովուրդին ձայնը և ընտրութիւնը,—պիտի հարցնէք։ Սակայն այդ տեսակ միամիտ հարցում ընելու, համար մարդ հաւատացած ըլլալու է թէ փադիշահներու այս երկրին մէջ իրապէս տապալած է խալիֆայի և սուլթանին իշխանութիւնը և անոր յաջորդած է ժողովրդային գերիշխանութիւնը։ Երազ մը, որ կարծես թէ երբէք իրականանալիք չունի փադիշահին իշխանութեան մէջ, ուր բռնակալութիւնը երևոյթ մը չէ, այլ վիճակ մը, բնական ձըգտում մը, որ բոլոր իշխանութիւնը իրենց ձեռքերուն մէջ ունեցողներուն բնական կը դառնայ։

Եւ Իթթիհատը՝ Համիդին յաջորդող ուժը, իշխանութեան այդ մոլուցքէն բռնուած, իր իշխանութիւնը տևականացնելու ու մըշտնջենաւորելու համար, ամեն օրինաւոր և ապօրէն միջոցները դիմեց։ Գործածեց ամեն միջոց, ամենէն պատուաւորէն ամենէն ստորնաքարշն ու ամենէն խայտառակը։

Նախ՝ իր միջոցներուն առաջինը եղաւ ստախօսութիւնը, Թիւրքաց սովորական զէնքը։ Իթթիհատը խոստացաւ առատառատ՝ ալբանացիին, հայուն, յոյնին, արաբին... միայն ընտրութեան շրջանին մէջ անոնց համբերատարութիւնը կամ կոյր հպատակութիւնը ապահովելու համար։

Չէ՞ մի որ Թիւրքական համբաւաւոր առակը կը յանձնարարէ «սատանային հետ բարեկամ ըլլալ մինչև կամուրջէն անցնիլը»։

Եւ յաջողեցան խաբել... եթէ ոչ ուրիշ ազգեր... գէթ պարզամիտ հայերը և անոնց ինքնակոչ տխմարամիտ առաջնորդները։

Իսկ քուէարկութիւնը կատարուեցաւ կատարելապէս անսովոր պայմաններու մէջ, որոնք ուրիշ բան չէին ցոյց տար, եթէ ոչ սահմանադրութեան չգոյութիւնը։

Բոլոր անոնք, որոնք տխմարութիւնը ունեցան քուէատուփերու մերձենալու, անպայման պարտաւորուեցան Իթթիհատին ցանկերը նետել քուէատուփ։ Վայ անոր, որ անկէ դուրս ուրիշ բան մը քուէարկելու փափագ ունեցաւ. կամ արգիլուեցաւ կամ ծեծուեցաւ։

Իթթիհատին ի նպաստ քուէարկելու քաջութիւնը ցոյց տուողներու քուէները խարդախուած են և եթէ ոևէ կերպով այդ խարդախութեան համար քուէարկուն բողոք բարձրացուցած է, անպայման ու անխտիր ինքզինքը վտանգի ենթարկած է։

Քուէատուփերուն շուրջ սուիններու շողշողուն տեսքը և ոստիկանական խիստ հսկողութիւնը աւելի սարսափ ազդելու հանգամանք ունէին։

Գալով խարդախութեանց, անոնց հաշիւը գտնել շատ դժուար պիտի ըլլայ։ Զարհուրելի խարդախութիւններ գործադրուեցան, որոնք ընտրական պայքարի ձևին տակ ուղղակի ճնշումներ էին քաղաքացիներու ազատութեան դէմ։ Տեղ-տեղ մուխթարներ տուներէն տուգանքի սպառնալիքի տակ քաղաքացիներու ինքնութեան թուղթերը ժողված և... փոխանորդաբար քուէ տուած են առանց քուէարկուներուն գիտութեանը։

Իթթիհատական մեծամասնութիւն կազմելու համար մեռեալներու մասնակցութիւնն ալ ապահոված են Նուրի-Օսմանիէի վէզիրները, և ոչ մէկ յայտնի ապօրինութեան առջև կանգ չառնելով։

Իրենց հայ զինակից, սօփայակիր սապետներն ալ, որ բոլոր սրբութեանց անունով կերդնուն, բոլոր վսեմ ու սուրբ իդէալներու անունով կը գործեն, երբ ընտրական ամենազնիւ պայքար մը, գործակցեցան իրենց «մեծ բարեկամներուն» այս զզուելի շահատակութեանցը և իրենք ալ ըրին՝ ինչ որ կրնային ընել—խաբէութիւն, սուտութիւն, խարդախութիւն, կեղծիք, բռնութիւն, ճնշում—ապահովելու համար իրենց յաջողութիւնը, որ կախում ունէր Իթթիհատին յաջողութենէն։

Եւ տեսանք արդէն, թէ անոնք ոտնահարեցին ազգային ամենէն նուիրական իրաւունքները, անոնք չքացուցին պատրիարքարանին բարոյական հեղինակութիւնը, անոնք խաբեցին բոլոր միւս կուսակցութիւնները... համերաշխական ժողովի օրօրոցին մէջ քնացնելով զանոնք... իրենց համար մեծ յաջողութիւններ ապահովելու, Իթթիհատէն երեսփոխաններու խոշոր թիւ մը կորզելու և քանի մը շլացուցիչ խոստումներ ու թեթև արդիւնքներ ձեռք բերելու համար, յետոյ յոխորտալու համար, թէ... «ահա մենք այսպէս կը գործենք»։

Սակայն «գողը գողէն գողացաւ, Աստուած տեսաւ զարմացաւ»։ Դաշնակցութիւնը հայ ազգը խաբեց, Իթթիհատը Դաշնակցութիւնը խաբեց... Իրաւ, ամեն մարդ տեսաւ զարմացաւ։

Իթթիհատը, որ խոստացեր էր Դաշնակցութեան շատ մը բաներ.—ա) Հողային հարցին լուծումը, բ) Հայաստանի բարենորոգումները, գ) 11-ի տեղ 20-ի չափ երեսփոխաններ — հիմա Ս. Զաւարեան կը յայտարարէ, թէ իր խոստումները կը դրժէ։ Այսօր իսկ «Ազատամարտի» մէջ Դաշնակցութեան այս սիւնը կը խոստովանէր, թէ այդ խոստումներուն ամենէն ամրջականը ու ամենէն շօշափելին երեսփոխանաց թուական յաւելումը պիտի ըլլար, որ հիմա կը տեսնուի ի հակառակէն կամ «բացառաբար» գործադրուած։

Եւ Զաւարեան՝ գուժկանը հանդիսանալով անշուշտ դաշնակցական հերոսներու մեծ յուսախաբութեան և աւաղողը առանց տըխմարամիտ տղայականութեան ու միամտութեան՝ կը պոռայ «Ազատամարտի» մէջ, թէ այս ընտրութիւնը բարոյական Ադանա մըն է առանց մարտ 31-ի արդարացման։

Ուրեմն Դաշնակցութիւնը կը խոստովանի, թէ խաբուած է։

Անմխալ Դաշնակցութիւնը... սխալական կը հռչակուի ուրեմն նոյն իսկ դաշնակցականաց բերնով... և հարկ կ՚ըլլայ խոստովանիլ, թէ զօրաւորը չանելու համար բարոյական պոռնկացումը մինչև հոն մխելու չէ, որ... ամեն բանի աչք գոցենք... զօրաւորին հետ, զօրաւորին կողմը ըլլալու համար։

Սակայն մի մոռնաք, պարոնայք քամելիօններ—դուք՝ որ կը կոչուիք Զօհրապ, Խաժակ, Վռամեան—թէ դուք դեռ քանի մը օրեր առաջ Կ. Պոլսոյ բոլոր թաղերուն մէջ ձեր արիւնաշաղախ ձեռքերը Ադանայի արիւնով տակաւին յագուրդ չգտնող մեծ ոճրագործներուն ու մարդասպաններուն երկարելով երբ միակ արդարացում՝ անոնց զօրաւոր ըլլալը մէջտեղ կը նետէիք։

Եթէ զօրաւորին ապաւինիլ խոհեմութեան դաս է, եթէ հզօրներ չոյել նուաղագոյն չարիքն է, եթէ տիրողին հետ ըլլալ՝ քան թէ անոր ընդդիմադիր՝ աւելի դիւանագիտական գործ է, ո՞ւր էր ձեր խելքը, ո՞վ դաւաճանութեան առաքեալներ, երբ Համիդ էր այս երկրին մէջ միակ զօրութիւնը, ալֆան ու օմեղան։ Այն ատեն ինչո՞ւ չունեցաք այն խոհականութիւնը, որ այսօր կը քարոզէք, որ այսօր, երբ ճարպիկ, խոհական ու հանճարեղ գործ մը, ձեր դէմը կանգնեցնել կուզէք։

Յանուն յեղափոխականութեան ուրեմն յետս կոչումը կընէ ձեր յեղափոխական գործունէութեանը, որ այս վայրկեանէն սկսեալ այլևս կը դառնայ կըլլայ պատմութիւնը ազգային մեծ դաւաճանութեան մը, որ 300,000 կեանքեր արժած է, մէկ կողմ թողլով բարոյական և նիւթական վնասները։

Զօրաւորին սորկամիտ խնկարկուներ, ըսէք մեզի, թէ ինչով դուք կը տարբերիք հիմա բոլոր անոնցմէ, զորս երբեմն դուք դաւաճան հռչակած էիք, պարզապէս անոր համար, որ անոնք զօրաւորին հետ ըլլալ աւելի նախապատիւ համարած էին, քան թէ անոր դէմ։

Ի՞նչ կատակերգութիւն, Աստուած իմ, և և դերերու ի՜նչ հսկայ փոփոխութիւն։

Երբեմնի էֆէնդիներու դասակարգին կը յաջորդէ ուրեմն այսօր դաշնակցական էֆէնդիներու դասակարգը, որ Նուրի-Օսմանիէի*) Բ. Դրան ստրուկն է ու աչքը մեր ազգային ներքին գործերու մէջ, ինչպէս էր երբեմն միւսը՝ Բաբը-Ալիի Բ. Դրան։

Շարայ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄՇԱԿԻ» ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Նամակ խմբագրութեան)

Թիֆլիս, 24 ապրիլ

«Մշակի» 40-ամեակի տօնախմբութեան Յոբելեանական Յանձնաժողովը սրանով պատիւ ունի իր խորին շնորհակալութիւնը յայտնել մեծ. պ. Մինաս Սուլխանեանին, Թիֆլիսում, որ նուիրեց երկու հարիւր (200) ր. յօգուտ «Մշակի» հրատարակութեան ապահովութեան ֆոնդի։

Փոխ-Նախագահներ Յանձնաժողովի՝
Յովհ. Սպէնդիարեան
Բժշկ. Բ. Նաւասարդեան
Արշակ Միլեան
Քարտուղար՝ Ստ. Մալխասեանց

ԱՀԱ ՊՏՈ՞ՒՂ... ԱՀԱ՛ ՊՏՈՒՂՆԵ՜Ր...

Պտուղ...

Խընձո՞ր։

Ոչ։

Ուրեմն տանձ։

Ոչ։

Իմացայ։ Դեղձ, անպատճառ դեղձ...

Ոչ և ոչ։ Աստուած պահպանէ ձեր պարտէզները։ Ժամանակին թող գայ անձրևը, ժամանակին փչէ քամին, ժամանակին տաքացնէ արեգակը և երկինքը շնորհէ ձեզ առատութիւն։ Ծառերը ցածր խոնարհեն իրանց գլուխները մրգերի շատութիւնից...

Իմ խօսքս երկոտանի պտուղի մասին է։

Պատիւ ունեմ ներկայացնել՝ Յովհաննիսեան։ Ոչ Արգար։ Արգարները վաղուց գնացել են, մեռել, մնացել են Ալէքսանդր Յովհաննիսեանները...

Իմ բարեկամ շնորհունակ սարկաւագ Զէօրեքչեանը բերեց նրան ինձ մօտ։

— Ո՞րտեղից էք եկել,—հարցրի ես։

— Հայերէն չեմ հասկանում,—պատասխանեց նա ինձ ռուսերէն։ Պատասխանեց ժպտալով։ Այդպէս ժպտում են խուլերը։ Նրանք շատ բան չեն լսում, տեղն ու տեղը պատասխանել չեն կարող։

— Ժամը քանիսն է,—հարցնում էք դուք։

— Եղանակը խիստ վատ է,—պատասխանում է խուլը և ժպտում է։ Ժպիտը ձեզ ասում է՝ «Ներողամիտ եղէք, մեղքը իմը չէ, չեմ լսում»։ Պատասխանների ծուռերը շտկում է ժպիտը։

Ալէքսանդր Յովհաննիսեանը հրաւիրված էր մեր դպրոցը ուսուցիչ ռուսերէնի։ Նա այցելեց մեր քաղաքապետին և սկսեց պատմել մեզ զարմանալի բաներ։ Քաղաքապետը զարմանում է։

— Դուք, պ. Յովհաննիսեան, այնպէս խելօք, այնպէս բարձր ուսում ստացած, գալիս էք ուսուցչութեան մի հայ դպրոց։

— Այո,—ասում է Յովհաննիսեանը։

— Խորհուրդ չեմ տալիս, դուք մայրաքաղաքներում էլ զարդ կը լինէք։

— Ոչ, ես ցանկանում եմ ազգիս ծառայել,—պնդում է Յովհաննիսեանը։

Երկար համոզում է քաղաքապետը։ Ապարդիւն։ Ա. Յովհաննիսեանը եզակի երևոյթ է։ Ի՞նչ մայրաքաղաք, ի՜նչ համալսարան, ի՜նչ գիմնազիա։ Երբէք, նա կը մնայ մեր դպրոցում, հայ դպրոցում։

Մենք ցաւած սրտերով, կարծում ենք՝ քաղաքապետը չէ ցանկանում, որ մեր դըպրոցներում լաւ ուսուցիչներ լինեն։

Քաղաքապետը գրում է դպրոցի տեսչին թուղթ։ Նա յարմար չէ տեսնում, որ Յովհաննիսեանը մնայ դպրոցում։

Քաղաքապետը զրկում է մեզ մի լաւ ուսուցչից։ Մենք գնում ենք նրա մօտ, խընդրում ենք թողնել մեզ պարոնին։

— Անկարելի է։

— Ինչո՞ւ։

— Պարոնը մի ինչ-որ յանցանքի համար մի տարի նստել է բերդ...

Մենք մնում ենք ապշած։ Բերդ նստելը անպատւութիւն չէ. ինչ կարիք կար ծածկել, ստել, խաբել մեզ, հոգաբարձուներին...

Պտուղ...

Անաջող ուսուցիչը դառաւ յանկարծ հրապարակախօս։

Սիրելի ընթերցող, եթէ ձեզ երբեմն պատահի յիմարութիւն ասել, ասացէք ցածր ձայնով, կամաց՝ քչերը կը լսեն. եթէ ուզում էք անպատճառ յիմարութիւնը գրչով անմահացնել, գրեցէք մանր տառերով՝ քչերը կը նկատեն, քչերը կը կարդան։

Այդ առաքինութիւնը չը ճանաչեց Ալէքսանդր Յովհաննիսեանը։

Խոշոր ռուս տառերով տեղիս լրագրում նա գրեց մի մեծ յօդուած։ Կարիք չը կայ յօդուածը կարդալ։

Կան յիմարութիւններ գեղեցիկ ասված, ինչպէս կան յիմարներ գեղեցիկ հագնված։ Ա. Յովհաննիսեանի յիմարութիւնը տգեղ է, կոպիտ և անհամ։ Պարոնը գրում է, որ հայ բեմը նուիրված է սուտ ազգասիրութեան և հայ գրողները անսահման յիմարներ և տգէտներ են, հայ դերասանները բեմի վրա կամ լաց են լինում կամ գոռում, զզուելի են միանգամայն, իսկ հայ ազգը վերին աստիճան յետամնաց է և տգէտ...

Գրողը հայ է. ինչպէս չը հաւատալ։

Մի առ մի մենք միևնոյն լրագրում փաստերով ցոյց տուինք պարոնի սխալները և ցանկութիւն յայտնեցինք, որ պարոնը նախ սովորէ հայերէն, ուսումնասիրէ մեր գրականութիւնը, ապա գրէ և ուսուցանէ։

Պարոնը մեզ պատասխանեց։

Եւ ինչ պատասխան։

Նա ինձ անուանում է հայրենասէր և նշանաբան է առնում Պուշկինի յայտնի ոտանաւորները «Ռուսաստանի թշնամիներին» և անընդհատ գովաբանում ռուսներին, ռուս գրականութիւնը, կարծեցնելով, որ մենք վատաբանել ենք՝ ինչ որ ռուսաց լեզուով է գրված, և հայերէնը գերադասել ենք։ Այդպիսի անազնիւ միջոցից յետոյ Յովհաննիսեանը արծարծում է այն միտքը, որ հայերէն գիտենալը նրա համար միևնոյն արժէքն ունի, ինչ որ նրա վարտիկի գոյնը։

Պտուղ չէ՞, Հայոց լեզու և վարտիկի գոյն՝ միևնոյն հասկացողութիւններն են դպրոցի մի ուսուցչի համար, որը մի ժամանակ եղել է համալսարանում և լսել է այնտեղ գեղեցիկ, զգացված խօսքեր իր պրօֆէսօրներից։

Խօսքերը մոռացվել են վաղուց և տգէտ ասիացին մնացել է միևնոյնը։ Նա այժմ մոռացել է հայերէնը, գրում է ռուսերէն, և առաջին անգամ գրելը ձեռք առնելիս, նա շտապում է թքել հայերի երեսին...

Բոշային մի օր ընտրել են արքայ։ Հէնց թագը գլխին դնելու միջոցին, նա անմիջապէս հրամայել է իր հարազատ հօրը կախաղան հանել։ Դա եղել է նրա անդրանիկ գործը։

Բոշաների ժամանակը անցել է։ Նրանց աւետեաց երկիրը վաղուց կորել է։ Ա. Յովհաննիսեանին արքայ չեն ընտրի և նա թագը գլխին չի դնի երբէք։ Դրա համար էլ փառք տանք Աստուծուն...

Հա, մոռացայ ասելու։ Սրանից մի ամիս առաջ միևնոյն լրագրում գրված էր, թէ երբ «Մշակը» կղերական թերթ է և խմբագիրը՝ Քալանթաձէն է (լաւ բաց արէք աչքները...), երբ թէ քանի մի երիտասարդներ տուել են լրագրին այդ լուրը։

Քալանթաձէ...

Ո՞ր Յովհաննիսաձէները տուել են այդ լուրը։

Յովհաննիսաձէներ...

Այ, պտուղներ...

Թող անձրևը թրջէ, արեգակը այրէ, քամին թափէ և որդերը ուտեն ձեզ...

Գր. Զալխուշեան

ԿԵԱՆՔԻ ՅԱՒԵՐԻՑ

VII

Մենք դեռ սովոր չենք

Կուլտուրական, զարգացած ժողովուրդը կարիք չէ զգում հրամանների, ի վերուստ կարգադրութիւնների, ուրիշ խօսքով չինովնիկական յարաբերութիւնների իր և իր կառավարողների միջև, որովհետև նա սովոր է ինքնուրոյն գործելու, ինքնուրոյն տնօրինելու իր հասարակական կեանքի երևոյթները, որովհետև նա զգում, նա իր զարգացմամբ, իր կուլտուրականութեամբ հասկանում է կարիքը և այսպիսի ձև ու միջոցներ, այնպիսի կարգ ու կանոն, դիսցիպլինա է մտցնում իր այդ ամեն գործերում, որ կարիք չէ զգում ի վերուստ հրամանների, կարգադրութիւնների։

Այո, հրամայելը, չինովնիկականութիւնը խլում է հասարակութիւններից ինքնուրոյնութիւնը, կաշկանդում է նրանց գործունէութիւնը, բայց այդ այդպէս է միայն կուլտուրական ազգերի, իրապէս զարգացած ժողովրդի համար, այլ ոչ նրանց՝ որոնք լոկ խօսքերով են զարգացած, որոնց կուլտուրականութիւնը լոկ հպարտութեան, մեծախօսութեան յաւակնութիւն է և ուրիշ ոչինչ։

Ազատ, ինքնուրոյն լինելը այդպիսի ժողովրդի համար զերոյի արդիւնք չէ տալիս, չէ ունենում իր ցանկալի ապագան, այլ ընդհակառակը աւելի քայքայւում, գրօշի արժէքի է վերածում իր հասարակական հիմնարկութիւնների գործունէութեան արժանիքը, որովհետև նա չէ ըմբռնում, որ իր ինքնուրոյնութեամբ նա աւելի պէտք է առաջադիմէ իր գործունէութեամբ, որովհետև նա չունի հասկացողութիւն կեանքի այս ու այն երևոյթների, նրա աւելի արդիւնաւէտ, աւելի օգտաւէտ դասաւորման մասին, նա դեռ զարգացած չէ, նա դեռ դարաւոր թմրութեան, ճահճացնող, լճացնող տգիտութեան քօղով է պարուրված։

Այդպիսի ժողովուրդը հէնց բնական իսկ օրէնքով կարիք է զգում հրամանի, կարգադրութեան, այդպիսի ժողովուրդը ազատ խօսքը լսելու, գնահատելու ընդունակութիւն դեռ չունի. նա ի վերուստ կարգադրութեան մի դատարկ խօսքը աւելի է ընդունում և չէ շեղվում այդ կարգադրութիւնից, չը նայած շատ դէպքերում եթէ ուզենայ, ամենայն հեշտութեամբ կարող է։

Բայց չէ՞ որ նա ապրում է հոտած ճահճում, ուրեմն նրա քթից պէտք է բռնել ու առաջնորդել. ու նա առանց ձայն հանելու, հլու, հնազանդ կը հետևի ձեզ, թէկուզ դուք նրան տանէք անդունդից վայր գլորելու։

Ինքնուրոյնութիւնից, ազատութիւնից զրկել ժողովրդին՝ ինքը ըստ ինքեան ոչ ոքի համար էլ ցանկալի և ոչ ոքի կողմից էլ գովելի չէ, ու իւրաքանչիւր զարգացած մարդու նպատակն է լինում ինքնուրոյնութիւն տալ ժողովրդին, բայց... բնական օրէնքը գալիս է ի դերև հանելու այդպիսիների վառ յոյսերը։

Ու ահա սկսում են թուլանալ իրանց գործունէութեամբ հասարակութեան ինքնուրոյնութեանը թողնված ժողովրդական կարևոր հիմնարկութիւնները, ի դերև հանելով ակնկալված և սպասվելիք բոլոր յոյսերը, առաջադիմելու, օգուտի փոխարէն յետադիմում և շատ անգամ վնաս հասցնում։

Եւ մենք հայերս էլ այդպիսի ինքնուրոյնութեամբ ապրել ու մեր գործերը կարգադրել չը գիտցող ազգերի շարքին ենք պատկանում։

Մեր ծխական տարրական դպրոցները չը նայած հոգևոր իշխանութեան թեմական տեսուչների կոնտրոլի տակ են գտնվում, բայց ըստ մեծի մասին թողնված են ժողովրդի հայեցողութեանը, նրա կամ նրա կողմից ընտրված անհատների իրաւունքի տակ են գտնվում բոլոր գործերը. նա է, որ արձակում, վարձում, բացում, փակում է մեր դպրոցների մանկավարժական խմբերն ու դպրոցները, և ի հարկէ այդ ամենը իր հասկացողութեամբ, հիմնված իր սահմանափակ դատողութեան վրա, որից ի հարկէ սպասել այնպիսի կարգադրութիւններ, որոնք արդիւնաւէտ լինէին, ի զուր է, և շատ պարզ կերպով աստիճանական քայքայումն է առաջանում։

Բայց մենք մեղադրել այդպիսիներին չենք կարող և նոյն իսկ իրաւունք էլ չունենք, որովհետև նրանք չեն անում այդ ամենը դիտմամբ, այլ որովհետև այդպէս են հասկանում, այդպէս է թւում նրանց լաւը, օգտաւէտը։ Բայց որովհետև ժողովուրդը իրան յատուկ տրամաբանութեամբ ուրիշի ասած ազատ խօսքը չէ ուզում լսել, և որովհետև այդպէս թողնելով էլ քայքայումն է առաջանում, բնականօրէն առաջանում է ի վերուստ կարգադրութիւնների պահանջ։

Ուրեմն մեր հոգևոր և թեմական իշխանութիւնները իրանց հովանաւորութեան տակ առած լինելով մեր դպրոցները՝ չը պէտք է այդ անուշադրօրէն դարձնեն, այլ պէտք է հետևեն դպրոցական կեանքին ու կարգադրեն կանոնաւորելու դպրոցական կեանքը, որի կարիքը գոնէ վերջին տարիներումս շատ զգալի է, որովհետև առաջադիմութեան փոխարէն լճացումն է տեղի ունենում։ Պէտք է կարգադրել ոչ թէ անցողակի, մատերի արանքով, այլ ուղղակի «հրամանով», բայց ոչ այնպիսի հրամաններով, որպիսիք լինում են մեղանում հազարներով և որոնք իրանց անկանոնութեամբ ապարդիւն են լինում, այլ պահանջելով և հսկելով, որ առաջադրված պահանջն իրականացվի։

«Հրամայելը» թող խորթ չը թւայ, որովհետև հրամանը ծանր ու խորթ չի լինի ստորադրեալների համար, եթէ միայն նա արդարացի և իրաւական լինի, այլ կը դառնայ մի արդար պահանջ, և մէկ էլ՝ չէ՞ որ մեր ժողովուրդը դեռ չը գիտէ կարևորութիւն ունեցող բաները ինքնաբերաբար անելու։

Իսկ մի՞թէ—հէնց օրինակ մեր դպրոցական կեանքում— քիչ այնպիսի դէպքեր կան, որ եթէ հոգևոր կամ թեմական իշխանութիւնները ուզենան՝ իրանց կարգադրութիւններով, հրամաններով ամենաուշը մէկ տարում կը փոխվեն և որպիսի փոփոխումներից կառաջանայ բաւականին մեծ արդիւնք։

Այո, պէտք է կարգադրել և օրէնքի ոյժ տալ, քանի դեռ մեր ժողովուրդը ինքն իրան չէ անելու, իսկ սպասել, որ նա ինքնաբերաբար անի, այդ դէպքում գուցէ մի քանի տասնեակ տարիների կարիք զգացվի, որովհետև գուցէ այդպիսի երկար տարիներից յետոյ մենք իրաւունք ունենանք մեզ կուլտուրական անուանելու։

Արշալոյս Տէր-Յովհաննեան

Ներքին-Ագուլիս

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—o—

Սպիտակ Ծաղկի տօնը Գանձակում

Գանձակ, 22 ապրիլ

Մօտ մի ամիս առաջ Թոքախտի դէմ կռւող Կովկասեան Ընկ. վարչութեան նախագահ իշխ. Թումանեանը դիմելով Գանձակի նահանգապետի ամուսին տիկ. Կօվալեվսկուն առաջարկել է բաց անել Գանձակում այդ Ընկերութեան ճիւղը։

Այդ հիման վրա գումարվում է բարձր շրջաններից ժողով, ուր ընտրվում է որոշ վարչութիւն և որոշվում Գանձակը ևս մասնակից անել այդ ընդհանուր հանդիսին ամսիս 20-ին։ Սակայն քաղաքիս Թուրք ազգաբնակութեան ազգային տօնը լինելով այդ, օրը որոշվում է յետաձգել հետևեալ օրվան՝ 21-ին, երբ ամբողջ շուկան բաց կը լինի։

---

*) Նուրի-Օսմանիէն Կ. Պոլսոյ մզկիթներէն մէկն է, որուն շրջակայքը իր անուամբը կը կոչուի։ Այս թաղամասին մէջ է Իթթիհատի կեդրոնական վարչութիւնը, որ աւելի գործունեայ կայան մըն է, քան բուն իսկ պաշտօնական Բ. Դուռը, որ կը գտնուի քիչ անդին Բաբը-Ալիի պողոտային վրայ։

Հասարակութեան մէջ հետաքրքրութիւն և հակումն դէպի այդ մեծ գործը զարթեցնելու համար կազմվում են դասախօսութիւններ։ Այսպէս՝ ամսիս 18-ին զինուորական բժ. Լավրովը հասարակական ժողովարանի դահլիճում խօսել է տուբերկուլօզի մասին, 20-ին՝ ս. Լուսաւորիչ եկեղեցու դպրոցի թատրոնական դահլիճում նշանգական բժիշկ Գ. Տէր-Գրիգորեանը խուռն բազմութեան ներկայութեամբ հայերէն լեզուով կարդաց իր զրոյցը նոյն նիւթի վրա։

Իսկ ամսիս 21-ին, շաբաթ օրը, Գանձակը արդէն մտնում է իր տօնական աղմկալից ուղին։ Դեռ առաւօտեանից ամբողջ քաղաքում շրջում էին ծաղկավաճառների 60-ից աւելի խմբեր։ Ի միջի այլոց տեղիս զինուորական մարմինը ևս կազմակերպել էր 10 զանազան խմբակներ քաղաքի այլևայլ մասերը շրջելու համար, իւրաքանչիւրը կազմված մի օֆիցէրից, մի տիկնից և մի կամաւոր զինուորից կամ ենթասպայից։

Այդ օրը դասախօսութիւններ եղել են պետական միջնակարգ դպրոցներում թոքախտի մասին և ի միջի այլոց ս. Յովհաննէս եկ.-ծխ. դպրոցում, ուր բժ. Վահան Աղիբէկեանը աշակերտութեանը մի ժամում տեղեկութիւն տուեց մարդկային ամենամեծ թշնամու և նրանից պաշտպանվելու միջոցների մասին։

Փողոցներով հանդիսաւոր կերպով շրջելով թոքախտի բացիլի, բժ. Կօխի մեծացրած պատկերները և միկրօսկօպ, երեկոյեան դէմ հանդէսը փոխադրվում է քաղաքային այգին։ Քաղաքի զանազան փողոցներով շրջում էին զինուորական երաժշտախումբ և ասիական «զուռնան»։

Ընդհանրապէս Սպիտակ Ծաղկի առաջին տօնախմբութիւնը Գանձակում եղաւ սպասածից փառահեղ և յաղթական։

Տուփերից, որոնք բացվեցին այսօր երեկոյեան, առացվեց մօտ 3,000 ր.։ Շատ ծաղկավաճառներ սպառելով իրանց ծաղիկների խոշոր կոյտերը՝ հաւաքում էին անցորդներից նրանց ծաղիկները և կրկին անգամ վաճառում։

Խաչէթ

—

Քահանայական ընտրութիւնը Լուգանսկում

Լուգանսկ, 18 ապրիլի

Երէկ, ամսիս 17-ին, երեկ. ժամը 8-ին, Լուգանսկի հայ գաղութը կայացրեց քահանայական ընտրութիւն։ Ժողովը հայոց աղօթատանն էր, որտեղ հաւաքված էին 19 իրաւատու ծխականներ։ Մխական այս ժողովը օրինաւոր էր։

Ժողովի նախագահ ընտրվեց Կարապետ Պօպօվեանը, իսկ քարտուղար՝ Գէորգ Բիբիշեանը։

Լուգանսկում քահանայ լինելու համար պաշտօնապէս դիմել էին՝ Զարզուրի Գարեգին քահ. Ասրեանը, Եւպատորիայի ուսուցիչ Պետրոս Թումանեանը և Նոր-Նախիջեւանի ս. Լուսաւորիչ եկեղեցու սպասաւոր Բալաբէխեանը։ Սրանցից Գարեգին քահ. Ասրեանը, որ պատահմամբ այդ օրը Լուգանսկումն էր գտնվում, հրաժարվեց քուէարկվելուց։

Քուէարկվեցին ուսուցիչ Պ. Թումանեանը և Բալաբէխեանը։ Պ. Թումանեանը ստացաւ 18 սպիտակ և մի սև, հետևապէս ընտրված համարվեց։ Ընտրութիւնը կայացաւ թերթիկներով։

Թումանեանի ընտրութիւնը միանգամայն նպատակայարմար է, եթէ ի նկատի ունենանք, որ նրա հետ քուէարկվողը 20—25 տարվայ հին տիրացուներից է, առանց որևէ կրթութեան ու պատրաստութեան, որի թեկնածութիւնը Լուգանսկում առաջ էին քաշում նրա ազգականները, բայց ֆիասկօյի հանդիպեցին։

Ժողովին նախագահող Կարապետ Պօպօվեանը և ծխական հոգաբարձութեան նախագահն է։ Նա պահում էր իրան շատ կորրեկտ. վերին աստիճանի քաղաքավարի, բարեկիրթ և պատրաստված անձն է, ինքն էլ քաղաքի առաջին հարուստն է, բայց ոչ միայն գրպանով, այլ և հոգով հարուստ։ Շատ լաւ տպաւորութիւն էին թողնում իրանց դատողութիւններով ու լուսաբանութիւններով Մանուշակեանը և Բեբիշեանը։

Նորեկ

ԴԱՐՁԵԱԼ ՑՐՏԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

I

Կարս, 21 ապրիլի

Բոլոր լրագրական տեղեկութիւններից երևում է, որ ամեն տեղ ձմեռը կրկնվել է. ամեն տեղ ձիւն, բուք, մրրիկ սառնամանիք։ Այդ կողմից Կարսը առաջին տեղն է բռնում։ Դեռ վառարաններ վառող շատ կան, դեռ ձմեռվայ հաստ հագնելիքներով փաթաթված ենք, դեռ տաք օր, կամ մի արեգակի երես չենք տեսել։ Ամեն օր ձիւն, թիփի, ձիւնախառն անձրև, ցուրտ և խոնաւ օրեր։ Օրացոյցը մեզ հաւատացնում է, որ ապրիլի վերջերումն ենք, բայց վառարանների ծուխը, ձիւնախառն եղանակը, մարդկանց տաք հագուստը պնդում են, թէ օրացոյցը սուտ է խօսում, մենք գտնվում ենք յունվարի մէջ։

Սարիբէգ Տէր-Միքայէլեան

II

Նոր-Բայազէտ, 18 ապրիլի

Հէնց որ մտանք ապրիլ ամիսը, եղանակների զգալի փոփոխութիւն տեղի ունեցաւ. Հակառակ ձմրան մեղմութեան և անտանելի տաք եղանակների, այժմ, չը նայած որ արդէն գարուն է, եղանակները վատ պատկեր են ստացել։ Մի օր ձիւն, միւս օրը սառնաշունչ քամիներ, երրորդ օրը փոթորիկ, անձրև և այլն։ Կամ թէ նոյնիսկ մի օրում մի քանի տեսակ եղանակներ են լինում. այսպէս՝ առաւօտը բացվում է արևով, կէսօրին սկսվում է անձրև, երեկոյեան դէմ բուք ու բորան, գիշերը սառնամանիք, իսկ միւս օրը ընդհակառակը օրը բացվում է ամպամած, մի փոքր անց մաղվում է անձրև, յետոյ արևը վախվխելով իր գլուխը ցոյց տալիս գորշ ամպերի ճեղքերից և երեկոյեան ընկսում է փչել ցուրտ քամին՝ հետը բերելով ձիւն ու բուք։ Եւ այդպէս՝ օրեր ու շաբաթներ... Եւ չը նայած, որ այժմ դաշտային աշխատանքների եռուն ժամանակն է, մեր հողագործ հասարակութեան կրիտիկական միջոցը, երբ նա իր յոյսը դրել է գարնան վար ու ցանքսի վրա, բայց և այնպէս դաժան եղանակները գալիս են նրա ցաւերի վրա էլ աւելի ցաւեր բարդելու, նրա կեանքն էլ աւելի տանջալից դարձնելու, մի կեանք, որ լի է անթիւ դժբաղդութիւններով...

Դեռ բաւական չէ, որ տիրող դաժան եղանակները խանգարում, ուշացնում են հողագործ դասի վար ու ցանքը, միւս կողմից էլ արօտների պակասութեան պատճառով բոլոր անասունները, մանաւանդ աշխատող լծկանները փակված մնում են գոմում՝ պատրաստի կերի վրա։ Գուցէ զարմանալի թւայ ընթերցողներին, եթէ ասեմ, որ ամեն օր մեր քաղաքային կշեռքի տակ տոպրակներով դարման են ծախում պուդը 25—30 կ., և ռանչպարների մեծ մասը քաշով-կշեռքով դարման է գնում իր մալը պահելու և սովից ազատելու համար։ Լաւ է, որ շատերը ունեն իրանց սեփական կերը անասունների համար, ապա թէ ոչ՝ բոլորը կը լինէին գնորդներ և ոչ ոք ծախող։ Բայց հետաքրքրական է, թէ փողը ինչ աղբիւրից է, որ օրական 1—2 ր. տարեկի կերի է տրվում աղքատ ընտանիքների կողմից. դա իրաւ հետաքրքրական հարց է, քանի որ ոչ միայն անասունների, այլ և իրանց ուտելիքի պաշարն էլ է պակասում շատերին...

Խոտը նոյնպէս բաւական թանգ գին ունի, բայց յոյս կայ, որ այդ կրիզիսը շուտով անցնի և բոլոր անասունները դուրս գան դաշտը արածելու։

Որսորդ

III

Առաջաձոր (Ղափան), 15 ապրիլի

Այս տարի մենք համարեա ձմեռ չը տեսանք. գիւղացիք, շնորհիւ իրար յաջորդող գարնանային եղանակների, դեռ մարտի սկիզբներին սկսեցին իրանց գարնանացանը և բաղ ու բօստանը։ Բաղերը գեղեցիկ կանաչել ու ծառերը ծաղկել էին միանգամայն. մարդ հրապուրվում էր բնութեան գեղեցկութեամբ։

Սակայն ամսիս 12-ի առաւօտից մինչև այսօր, որ արդէն չորրորդ օրն է, անընդհատ ձիւն է տեղում և սաստիկ ցուրտ է, ինչպէս յունվար ամսին։ Ջուրը սառել և ամեն ինչ ցրտատար եղաւ. կանաչ թփերը չորացել են, իսկ ծաղիկները դեղնել-թառամել։ Վնասները հասնում են աւելի քան 4,000 ր., և եթէ մի քանի օր էլ այսպէս տևէ, անասունների կեր չը լինելու պատճառով մեծ վնաս ու ջարդ կը լինի։ Գիւղացիք հաւաքված գիւղի մէջտեղը՝ տխուր ու տրտում, մի բոպէով իրար դարդ-դարդի տուած, չը գիտեն ինչ անեն. անիծում ու ողբում են իրանց սև բաղդը։ Ասում են, որ այս սաստիկ ցուրտը անշուշտ վնասած կը լինի և հացաբոյսերին։

Մեր հարևան գիւղերը ևս նոյն դրութեան մէջ են գտնվում։

Ստ. Աստուածատուրեան

ԱԽԱԼՑԽԱՅԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԴՊՐՈՑԻ «ՖԵՐՄԱՅԻ» ԲԱՑՈՒՄԸ

Ապրիլի 1-ին կուլտուրական բնաւորութիւն ունեցող տօնային մի օր ունեցանք Ախալցխայում, մի հազուագիւտ օր, որի նմանը շատ քիչ է պատահում գաւառական յետ ընկած վայրերում, երբ մարդ մի կողմ թողած կեանքի միապաղաղ հոգսն ու դարդը՝ ամբողջ սրտով լցվում է հանդիսաւոր օրվայ կենսուրախ տրամադրութեամբ։ Ախալցխայի հայ հասարակութեան համար այդպիսի մի օր էր ապրիլի 1-ը։ Կատարվում էր Կարապետեան դպրոցի «ֆէրմայի» հանդիսաւոր բացումը ժողովրդի խուռն բազմութեան, հոգևորականութեան և դպրոցի վարչական մարմինների ու աշակերտութեան ներկայութեամբ։ Հանդէսը սկսվեց պատարագից յետոյ, ցերեկվայ ժամը 1-ին, «ֆէրմայի» համար յատկացված հողաբաժնում, որ գտնվում է քաղաքի միջնում և ուր այս ուսումնական տարվայ սկզբից սկսված են Կարապետեան դպրոցի աշակերտների գործնական պարապմունքները գիւղատնտես ուսուցչի ղեկավարութեամբ։ Հանդէսի ժամանակ պէտք է կատարվէր ծառատնկութիւն։ «Ֆէրմայի» մուտքը և շինութիւնը զարդարված էին դրօշակներով և թարմ ոստերի գիրլանդներով, պատրաստված էր նաև առանձին ամբիոն, ուր կատարվելու էր օրհնութեան կարգը։

Աշակերտութիւնը, դպրոցի հոգաբարձութեան անդամները և ուսուցչական խումբը տօնի առիթով իրանց կրծքերին կրում էին գիւղատնտեսութեան գաղափարը արտայայտող նշաններ, իսկ հանդէսի հարուստ ծրագիրը տօնային տրամադրութիւն էր ներշնչում նաև հանդիսականներին։

Հանդէսը սկսվեց հոգևորականների օրհներգով։

Հողաբաժինը օրհնելուց և ծառատնկութեան պաշտօնական կարգը կատարելուց յետոյ՝ աշակերտների երգեցիկ խումբը ընկսեց երգել գարնան և դաշտային աշխատանքին նուիրված երգեր, իսկ նոյն միջոցին մի քանի աշակերտ՝ իրանց ձեռին ունենալով խնձորի և տանձի տունկեր՝ կատարում էին տնկելու գործողութիւնը, նախապէս յատկացված փոսերում։ Երգի ժամանակ մէջընդմէջ արտասանվում էին նաև ոտանաւորներ։ Օրհնութեան սեղանի վրա դրված էր և մի ափսէ՝ լի վարունգներով։ Հանդէսի ընթացքում ֆէրմայի մասին խօսեց Կարապետեան դպրոցի աւագ-ուսուցիչ Գ. Տէր-Յակոբեանը։ Բացատրելով գիտական մեթօդով հողը մշակելու կարիքը, որ միակ միջոցն է գիւղատնտեսութեան ընկած վիճակը բարձրացնելու և սակաւահող գիւղացու տնտեսական քայքայված դրութիւնը բարելաւելու համար, յայտնեց, որ այդ նպատակով Պետերբուրգի Եկեղեցական Խորհուրդը յատկացրել է ի թիւս այլ դպրոցների նաև մեր դպրոցին տարեկան 1500 ր. նպաստ, որի շնորհիւ և այս տարվայ սկզբից բացված է «ֆէրման» աշակերտների գործնական աշխատանքների համար, իսկ ուսումնարանում առանձին դասեր՝ գիւղատնտեսական գիտութեան համար, մանաւորապէս պարտիզպանութեան, բանջարաբուծութեան, պտղաբուծութեան և մեղուապահութեան։ Այնուհետև կոչ անելով հասարակութեանը ջերմ մասնակցութիւն ցոյց տալու «ֆէրմային» սեփական դրամական օժանդակութեամբ, որ հնարաւոր լինի զարգացնել, բարեկարգ և պատշաճ վիճակի մէջ դնել նոր սկսված գործը, առաջարկեց մի երախտագիտական հեռագիր ուղարկել «ֆերմայի» հանդիսաւոր բացման առիթով Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդին՝ հասարակութեան անունից։ Այդ առաջարկը ոգևորութեամբ ընդունվեց և որը կատարելու համար հասարակութիւնը յանձնարարեց բժ. Այվազեանին, Գ. Արաբեանին և Յ. Յակոբեանին։ Իսկոյն տեղն ու տեղը կազմվեց հեռագիրը՝ հետևեալ բովանդակութեամբ, որ հասարակութեան հաւանութիւնը ստանալուց յետոյ ուղարկվեց Պետերբուրգի Խորհրդին. «Այսօր հասարակութեան խուռն բազմութեան ներկայութեամբ օրհնվեց և պաշտօնապէս բացվեց Ախալցխայի Կարապետեան դպրոցի «ֆերման»։ Ախալցխայի հայ հասարակութիւնը, միացած՝ դպրոցական-վարչական մարմինների հետ, չէր կարող այս հանդիսաւոր ժամին մոռանալ նախաձեռնողին, ի դիմաց Պետերբուրգի Հայոց Եկեղեցական Խորհրդի՝ յայտնելու իր խորին և անմոռանալի երախտիքը։ Հանդէսը աջող կերպով վերջանալուց յետոյ հասարակութիւնը ուրախ տրամադրութեան տակ ցրվեց, օրհնելով այսպիսի մի բարի գործի պատճառ եղողներին։

Այսպիսով՝ Կարապետեան դպրոցը գործնական կերպով արդարացնում է Պետերբուրգի Խորհրդի իղձը, այն է ունենալ ծխական դպրոցներին կից գիւղատնտեսական դասընթացքներ և գործնական պարապմունքներ՝ նման եւրօպական քաղաքակիրթ երկիրների։

Պետերբուրգի Հայոց Եկեղեց. Խորհրդի ծրագիրը, ինչպէս յայտնի է, նախ քան գործադրվելը մասնագէտ գիւղատնտեսների խորհրդակցութեան նիւթ դարձաւ, որոնցից շատերը աննպաստ կարծիք յայտնեցին նպաստի տրվելիք ձևի վերաբերմամբ, կարծելով որ 1,500-ական ռուբլու նպաստը ոչ մի շօշափելի արդիւնք չէ կարող առաջ բերել. բայց այսօր մեր դպրոցի ֆերման տեսնողը—այն մեղուաջան աշխատանքը, որ մեծ հետաքրքրութեամբ և եռանդով կատարում է աշակերտութիւնը և այսքան քիչ ժամանակվայ մէջ բանջարաբուծութեան մասի ունեցած արդիւնքը—այլ ևս ամեն կասկած փարատում է։ Ինչպէս ասացի, օրհնութեան սեղանի վրա դրված էր և վարունգներով լի մի ափսէ, հասարակութեան համար՝ դա մի չը տեսնված նորութիւն էր։ Ամենքը զարմանում էին, որ ապրիլի 1-ից դեռ շատ առաջ ֆերման ունեցել է այդպիսի բանջարանոցային արտադրութիւն, մինչդեռ տեղական ամեն բօստանջի իր համար պարծանք կը համարէր յունիս ամսի մէջ իսկ վարունգ հասցնելը, չը նայելով որ նրանցից շատերն ունեն ջերմոցներ։ Բանջարաբուծութեան հետ զուգընթացաբար առաջ է տարվում նաև պտղաբուծութիւնը, պարտիզպանութիւնը և մեղուաբուծութիւնը, և մի քանի ամիս յետոյ անշուշտ ուրիշ շատ նորութիւններ պիտի ցուցադրէ մեր ժողովրդի առաջ, որոնք Ախալցխայի համար առաջնակարգ նշանակութիւն պիտի ունենան։ Թող պահանջվի այդպիսի նպաստ ստացող դպրոցների վարչութիւններից բարեխիղճ վերաբերմունք, հոգատարութիւն ու ջանք և ամեն մինն էլ կը տայ այն արդիւնքը՝ ինչ Կարապետեան դպրոցը։

Ախալցխա Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքայի բացակայութեան ժամանակ նրա պաշտօնակատարութիւնը անցնում է Փոխարքայի զինուորական մասի օգնական ինֆանտերիայի գեներալ Ն. Շատիլովին։

◆ Ապրիլի 22-ին Թիֆլիսից Պետերբուրգ մեկնեց Փոխարքայի դիւանատան վերատեսուչ հօֆմէյստէր Ն. Պետերսոնը։

◆ Կովկասի Փոխարքայի դիւանատան փոխ վերատեսուչ Ն. Նիկոլսկին նշանակվում է Փոխարքայի դիւանատան զինուորական ժողովրդական վարչութեան փոխ-վերատեսչի պաշտօնում։

◆ Կովկասի Փոխարքայի դիւանատան նախկին փոխ-վերատեսուչ Վ. Ստրատօնովը նշանակվել է Մոսկվի պետական բանկի ճիւղի կառավարչի պաշտօնում։

◆ Կախեթի երկաթուղագծի շինութեան տեսուչը յայտնեց, որ այդ երկաթուղագծի Նաւթլուղ-Իօրի կայարանների միջև ուղղութիւնը և ընթացքը արդէն որոշված է վերջնականապէս։ Երկաթուղագծի ուղղութիւնը հնար եղածին չափ մօտեցված է այդ ճանապարհի ուղղութեան վրա գտնվող գիւղերին։

◆ Երէկ պարզվեց, որ Սպիտակ Ծաղկի օրը Թիֆլիսում հաւաքվել է ընդամենը 17,200 ր. գումար։

◆ Ապրիլի 22-ին կայացաւ Թոքախտի դէմ Մաքառող Կովկասեան Ընկ. վարչութեան նիստը, որի ժամանակ պարզվեց, որ Աբասթումանի սանատօրիումի կառուցման համար ալիւսի հայթայթումը պիտի կապալով տրվի։ Զեկուցվեց Ընկ. Նովօրօսսիյսկի ճիւղի միջնորդութիւնը Սպիտակ Ծաղկի տօնը ապրիլի 20-ի փոխարէն մայիսի 5-ին կատարելու մասին։ Բացի այս ամենը, Ընկ. վարչութեանը զեկուցվեց, որ ամուսիններ Ամիրաղեանները նուիրաբերել են 1,500 ռուբլի գումար, ապագայ սանատօրիումի մէջ մի մահճակալ պահելու նպատակով։

◆ Կուր գետը, որ վերջերս նուազել էր, վերջին օրերս տեղացած յորդ անձրևների շնորհիւ դարձեալ վարարել է։

◆ Ապրիլի 22-ին տեղի ունեցաւ Բօրչալուի և Դուշէթի գաւառների աղնուականութեան տարեկան ժողովը։

◆ Ապրիլի 21-ին Վերայի «Ֆանտազիա» այգում ճաշ տրվեց իրաւաբանների մարմնի կողմից ներկայիս քաղաքային վարչութեան անդամ ընտրված երդ.-հաւատարմատար Մ. Աթաբէգեանին։ Ճաշկերոյթը խիստ մտերմական բնոյթ էր կրում։

◆ Թիֆլիսի Բուսաբանական այգին 12 տարիների ընթացքում, այն է 1900—1912 թ.-ը, վաճառել է մասնաւոր անձանց 170,000 պատուաստված ծառեր, իսկ անպատուաստ վաճառված ծառերի թիւը մօտ մէկ միլիոնի է հասնում։

◆ Թիֆլիսի Հասարակական ակումբը իշխանութիւնից պատշաճ թոյլտւութիւն է ստացել՝ ի յիշատակ Ա. Հերցէնի երեկոյթ կազմակերպելու համար, որ տեղի կունենայ շաբաթ, ապրիլի 28-ին, Բօրսայի դահլիճում։ Կը կարդացվեն երկու ռեֆերատներ՝ այն է Լ. Տարասեվիչը՝ «Ա. Հերցէնի ընկերական ինքնուրոյնութիւնը» թեմայով և Մ. Անդրէեվը՝ «Ա. Հերցէնը և նրա «Կօլօկօլը» (Հնչակ) թեմայով։ Վերջում կը լինի այն բանաստեղծութիւնների ընթերցումը, որոնք նուիրված են Հերցէնին, այլ և կը կարդացվեն Ա. Հերցէնի գրուածքներից հատուածներ։

◆ Կովկասեան Բժշկական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը տեղի կունենայ ապրիլի 27-ին, որի ընթացքում բժ. Ս. Փօնտօեվը կը կարդայ մի զեկուցումն ժամանակակից նեվրօխիրուրգիայի մասին։

◆ Երաժշտասէրների ընկերութիւնը Պետերբուրգում ամսիս 23-ին կազմակերպել է վրացական երաժշտութեան երեկոյթ, որի ժամանակ նուագվել են կտորներ Բալանչիվաձէի «Թամարա» և Փօլիվերաշվիլիի «Կուաքերի կործանումն» օպերաներից։ Երեկոյթին պարել է Այսեդօրա Դունկանի աշակերտուհի Ջերքեզովան։ Երեկոյթը աջող է անցել։

◆ Վրաց յայտնի դասախօս Գ. Ռօբաքիձէն Պետերբուրգից Թիֆլիս է վերադարձել։ Նա մտադիր է այստեղ երկու դասախօսութիւն կարդալ՝ մինը ռուսերէն, միւսը վրացերէն լեզուով։ Երկրորդ դասախօսութիւնից յետոյ տեղի կունենայ վիճաբանութիւն Ալ. Խատիսեանի նախագահութեամբ։

◆ Ժանդարմական ոստիկանութիւնը հեռագրով հրաման ուղարկեց Վլադիկավկազի, Թիֆլիսի, Աստրախանի, Օդեսսայի, Սեվաստոպօլի և Սիմֆերօպօլի երկաթուղագծերի վարչութիւններին՝ նկարագրելով Զելիմ-խանի աւազակախմբի անդամների նշանները, խնդրելով երկաթուղագծերի վարչութիւններին հսկել յիշեալ աւազակախմբի վրա, որը, ըստ ենթադրութեան ժանդարմական վարչութեան, պիտի որ Թիւրքիա անցնի երկաթուղով, գլուխ ունենալով Զելիմ-խանին։

◆ Ապրիլի 22-ին, գիշերով, ոստիկաններից մէկը փողոցում բարձրացրեց խիստ կերպով արբած մի մարդու՝ ուշաթափ վիճակի մէջ, որին ոստիկանատուն տարաւ։ Նա Իվան Բազգիբէձէն էր. նա վախճանվեց։

◆ Ապրիլի 23-ին տրամվայի տակ ընկած կինը պարզվեց, որ Սագարեջօ գիւղի դեղջկուհի Մարիա Աբէլաձէն է, 60 տար.։

◆ Ապրիլի 23-ին յանկարծամահ եղաւ Թելաւեցի Ալէքսէյ Միրիմանօվը, 60 տարեկան, ճաշելու ժամանակ։

◆ Ապրիլի 23-ին, երեկ. ժամը $8^{1}/_{2}$-ին, Վօրօնցովի արձանի մօտ, հասարակութեան և ոստիկանի աչքի առաջ, վրաց դերասան Վիկտօր Մատարաձէն ընդունեց նաշատիրի ոգի, իրան կենազուրկ անելու նպատակով։ Նրան ուղարկեցին Միքայէլեան հիւանդանոց։ Նրա կեանքին վտանգ է սպառնում։ Նրա գրպանում գտնվեց մի գրութիւն հետևեալ բովանդակութեամբ. «Մարդի՛կ, թող նզովեալ լինի նա, ով որ հաւատայ կնոջ սիրոյն։ Կինը նման է քամու»։

◆ Գանձակից, ապրիլի 23-ից, մեզ գրում են հետևեալը. «Այսօր առաւօտեան դէմ լուր ստացվեց, որ այս գիշեր, Ջոլակ կոչված ուխտատեղու պահապան Եղիշէ Աղիեանը, 23 տարեկան, մորթվել է։ Իսկոյն դէպքի վայրը ժամանեց ոստիկանութիւնը և ականատես եղաւ մի սոսկալի եղեռնագործութեան։ Դաշոյնի 18 խոր հարուած խեղաթիւրել էին անմարդաբնակ՝ քաղաքից մօտ 3 վերստ հեռու գտնվող մատուռի բակում ընկած դիակը։ Ձերբակալվեց սպանվածի ամուսինը, որ ենթադրվում է սպանութեան անմիջական պատճառ։ Կասկածում են Աղիեանի քենակալին»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ. ԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Վրաց թատրոնում

Վրաց թատրոնին կից գտնվող «Նոր ակումբի» աւագների խորհուրդը ամեն կերպ աշխատում է իր անդամներին և հիւրերին գոհացնել։ Բաւական ժամանակից ի վեր նա սկսել է Վրաց թատրոնում սիմֆոնիական համերգներ կազմակերպել, երբեմն առ երբեմն հրաւիրելով Թիֆլիսում հիւր գտնվող յայտնի երաժիշտներին, մասնակցելու յիշեալ համերգներին։ Համանման մի համերգ տեղի ունեցաւ Վրաց թատրոնում շաբաթ, ապրիլի 21-ին, մասնակցութեամբ երիտասարդ ջութակահար Եարօսլավ Կոցեանի։ Համերգի սկզբում լարանուագ երաժշտախումբը, ղեկավարութեամբ Ս. Պրեսմանի նուագեց Մենդելսօնի «Շոտլանդական № 3 A-mol սիմֆոնիա» կոչված երկար կտորը, բաւական աջող կերպով և վարպետօրէն։ Մի հանգամանք պիտի նկատել սակայն, որ չէ վրիպում ուշադիր դիտողի աչքից, այն է, որ ղեկավարը առհասարակ յետ է մնում, մինչդեռ խումբը աւելի գիտակ իր գործին, այսպէս ասած «եօլա» է գնում և առանց խմբապետի, կարծես նշանակութիւն չը տալով խմբապետին։

Վերոյիշեալ սիմֆոնիայից յետոյ Ե. Կոցեանը, նուագակցութեամբ լարանուագ երաժշտախմբի, նուագեց Չայկօվսկիի «Ջութակի համերգը» կտորը։

Աւելի ուժեղ էր Կոցեանի նուագած Բախի «Չակօննան», որից յետոյ հասարակութեան բազմիցս կրկնվող bis-երին զիջելով, նուագեց Բախի—Sonate-ը, նոյն երաժշտագէտի Aria-ն, Վինեավսկիի՝ Մազուրկան, իսկ վերջումը Շումանի՝ Abendlied-ը (Chante soir)։

Եարօսլավ Կոցեանի տեխնիկան անշուշտ զարգացած է, բայց մենք նրանում նկատեցինք մի բաց, որը նուազ նշանակութիւն չունի իւրաքանչիւր երաժշտագէտի, և մանաւանդ ջութակահարի համար։ Այդ բացը անհրաժեշտ ոգևորութիւնն է, որը պակասում է ջութակահարին։ Ուժեղ թափի, վերացած ոգևորութեան փոխարէն մենք նրանում տեսանք սառնութիւն։ Եւ թող չափազանցութիւն չը լինի, եթէ ասենք, որ Կոցեանը գերազանցօրէն լաւ վարպետ արհեստաւոր է, բայց նուազ լաւ արուեստագէտ։ Արուեստագէտը երբ ինքը չէ ոգևորվում, նա ոգի տալու անընդունակ կը լինի ունկնդիրներին։ Բաւական չէ որևէ երաժշտական կտոր լաւ կատարել, այլ և անհրաժեշտ է զգալ, ապրել, հոգով ապրել։ Լինել լաւ երաժշտագէտ, ձեռքում ունենալ 10,000 դոլլար արժեցող ջութակ և չոգևորվել ու ոգևորել ունկնդրին, այս առնուազն ներելի չէ Կոցեանի նման ջութակահարին։ Եթէ մեր Նալբանդեանները, Դաւթեանները, Վրոյրները ջութակահարութիւն սովորէին Կոցեանի նման նպաստաւոր պայմաններում և ձեռքերումն էլ ունենային այնչափ թանգագին ջութակներ, մենք խորապէս համոզված ենք, որ նրանք հրաշալիօրէն կը նուագէին և աւելի մեծ անուն կը հանէին։

Համերգին ներկայ էր մեծ բազմութիւն, գլխաւորապէս սօլօլակցիներից։ Լաւ չէր լինի, արդեօք, որ մեր սօլօլակցիները երաժշտութեան սիրահար լինելով՝ երբեմն էլ իրանց ազգակից ջութակահարների համերգներին ներկայ գտնվէին։

A.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Գարուն», գրական-քննադատական ալմանախ, III գիրք, Մօսկվա, 1912 թ.

Ներկայ թւականի գարնանաբերը հայ գրականութեան՝ իրաւամբ կարող է Մօսկվան լինել։ Այս մի քանի ամսվայ ընթացքում երրորդ հրատարակութիւնն է, որ մենք ստանում ենք այնտեղից։ Եւ հրատարակութիւնները, պէտք է ընդգծել, մեր շաբլօնի գործերից չէ. Նա իր հետ նոր խօսք է բերում, նա նոր մտածողութեան, նոր համբաւի աւետաբերն է։ Այդտեղ պաշտպանվում է կեանքի վերլուծման որոշ տեսակէտը, հանդիսանալով ընդդ. հինին արուեստի, գրականութեան նոր բանբերը։ Դա, վերջապէս, մի թարմացուցիչ հոսանք է մեր արդի գրական տաղտուկ իրականութեան մէջ։

Տարվայ սկզբին Մոսկվայից էր, որ եկաւ մեր երիտասարդ նորագոյն գրող Կ. Միքայէլեանի գողտրիկ գրուածքների II ժողովածուն, որով հանդէս է գալիս օբիեկտիվ գեղարուեստագէտի տարրերով օժտված բէլլիստը, որ բեղմնաւոր ապագայ է խոստանում։

Այս ժողովածուին յաջորդեց մի ուրիշ շնորհալի երիտասարդի ստեղծագործութիւնների հատորը. դա Վ. Տէրեանի բանաստեղծութիւնների մի ամբողջ հատորն էր, մի հանգամանք, որը փայլուն ապացոյց է, թէ որքան բեղուն է երիտասարդ բանաստեղծի գրիչը։

Գրական-գեղարուեստական տեսակէտից վերոյիշեալ երկու գործերն էլ ունեն իրանց գրական նշանակութիւնը, որի մօտից լռութեամբ անցնելը համարում ենք յանցանք։ Մենք կարեւոր նշանակութիւն ենք տալիս երկուսին էլ, ուստի և երկարօրէն կանգ ենք առնելու նրանց վրա «Արօր» պարբերականում, որին և յանձնել ենք Վ. Տէրեանի մասին գրած մեր քննադատական էտիւդը, Կ. Միքայէլեանինը թողնելով յաջորդ անգամվան։

Մենք այժմ կանգնենք «Գարուն» ալմանախի ներկայ գրքին, որը իր մէջ պարունակում է քննադատական մի շարք լուրջ յօդուածներ։ Գիրքը մի ստուար հատոր է, որ բաղկացած է ամբողջ 370 մեծադիր երեսներից։ Ամբողջ հատորը կարդալուց յետոյ ակամայ գալիս ես այն եզրակացութեան, որ յօդուածների հեղինակները ամբողջապէս տոգորված են ապագայ հասարակական կեանքի լաւագոյն տենչերով։ Քննադատում են անցեալը, քննադատում ներկան՝ յանուն ապագայի։ Օբիեկտիվ, սուր, անողորմ լեզուով է մօտենում այս քննադատող խումբը մեր ժամանակակից գրական գործիչներից յայտնի անուններին։

Ահարոնեան, Աւ. Իսահակեան, Ծատուրեան, Յ. Յովհաննիսեան, Յ. Թումանեան —ահա ժամանակակից անուններ, որոնք հայկական Պառնասում աբսոլիւտ, բայց և անորոշ մեծութիւններ էին համարվում և որոնք այժմ ստանում են իրանց համապատասխան գնահատութիւնը։ Օբիեկտիվ քննադատութիւնը իր նոր խօսքով գալիս է դէն գցելու այդ անուններից անորոշ մակդիրները, ճշգրէն բնորոշելով նրանց գեղարուեստական ստեղծագործութիւնների հասարակական միջուկը։

Նախ Կ. Կուսիկեանի և Ալ. Ռուբէնիի լուրջ ու գիտական ոգով գրված պատմաքննադատականներով է սկսվում ալմանախը։ Առաջինը կանգ է առել Խ. Աբովեանի նշանակութեան, իսկ երկրորդը Ս. Շահազիզի գրուածքների հասարակական դերի պարզաբանման վրա։ Շատ ջերմ տողեր է նուիրել Խ. Աբովեանին Կ. Կուսիկեանը, որի քննադատական տեսակէտը տարբերվում է ալմանախի միւս քննադատների տեսակէտից։ Ռուբէնին հասարակական լայն հայեցակէտով է մօտենում Ս. Շահազիզի գրուածքների անալիզին, բնորոշելով նրան իբրև հայկական նորածիլ լիբերալիզմի ռահվիրաներից մէկին։

Լուրջ և բազմակողմանի բնոյթ ունի Ալ. Մարտունիի քննադատականը՝ «Յ. Յովհաննիսեանի և Ալ. Ծատուրեանի բանաստեղծութիւնների հասարակական արժէքը» յօդուածը։ Յօդուածագիրը նախ ուրուագծում է հայ լիբերալիզմի փայլուն շրջանն ու բուրժուական կեանքի նուաճումները և ապա անցնում երկու բանաստեղծների համեմատական բնոյթագրին։ Ալ. Ծատուրեանը հայ լիբերալիզմի ժառանգ է, բայց վերջերս ենթարկվել է որոշ էվօլիւցիայի. «Այսօր Ծատուրեանը աւելի է փարվում դեմօկրատիզմին,—ասում է Մարտունին։— Նրա երգերը աւելի վշտոտ են, նրա քնարը տառապանքի, համամարդկային գաղափարների հնչիւններ է արձակում»։ Դա հարկաւ «նոր ժամանակների տրամադրութեան արդիւնք է»։

Դ. Անանունը իր «Անցեալի մեծարանքում» քննադատում է Յ. Թումանեանի բանաստեղծութիւնները, ինչպէս և Պ. Մակինցեանը «Դիմագծերում»։ Յ. Թումանեանին բնորոշում են իբրև հայրենի գիւղի երգիչ էպիկ բանաստեղծ, որ առաւելապէս անցքերով է զբաղվում, քան մարդու ներքին աշխարհով, հոգեբանական գծերով։ Դ. Անանունը տալիս է նաև բանաստեղծին նիւթ տուող միջավայրի (գիւղական, նահապետական) համառօտ անալիզը, որը շատ կարևոր հանգամանք է շարժառիթների բնորոշման համար։

Քննադատական ակնարկների մէջ ամենից ընդարձակը Ցոլակ Խանզադեանի «Աւետիս Ահարոնեան» խորագրով յօդուածն է։ Կտրուկ, սուր բնորոշումներով է մօտենում քննադատը Ահարոնեանի երկերին։ Գեղարուեստական ճշմարտութեան գաղափարի ճիշտ ըմբռնումով նա աստիճանաբար բաց է անում Ահարոնեանի իսկական պատկերը։ Նրա գլխաւոր գծերից մէկը, որ խակալլէս սանտիմենտալիզմն է, լալկանութիւնը, ճոռոմաբանութիւնը, ռոմանտիզմը à la Շատոբրիան, այն չափազանցութիւնն է, որով հեղինակը գեղարուեստական ճշմարտութիւնից շատ և շատ է հեռանում։ Քըննադատը շատ իրաւացի կերպով է մէջ բերել Տոլստոյի մի նշանաւոր ցիտատը գեղարուեստական ճշմարտութեան ըմբռնման նկատմամբ։ «Какъ ни пошло это говорить, —ասում է Տոլստոյ— но во всемъ въ жизни, въ особенности въ искусствѣ, нужно только одно отрицательное качество—не лгать»։ Սակայն կան և այդ գրութիւնը մեղմողներ, որոնք եթէ խաբելուց չեն կարողանում հրաժարվել ստախօսութեան գաղափարից, գոնէ դրա համար էլ չափ են պահանջում. ври, но знай же мѣру!... Գեղարուեստական սուտը՝ մեծ չափով է խճողված Ահարոնեանի գրուածքների մէջ։ Ընթերցողը անշուշտ չը պէտք է շփոթի գեղարուեստական սուտը փաստական սուտից, որովհետև իրաւաբանական կոդէկսների տեսակէտից առաջինը պատժական չէ ենթարկվում, մինչդեռ երկրորդը իր մէջ քրէական տարրեր ունի... Վերջինիս մէջ մենք Ահարոնեանին չենք կարող մեղադրել. բայց որ նրա գրուածքները շատ հեռու են գեղարուեստական ճշմարտութիւնից, այդ բանում մենք միանգամայն համաձայն ենք քննադատ Ց. Խանզադեանի հետ։ Այդ ճըշմարտութիւնը ըմբռնելու համար անհրաժեշտ է ունենալ տիպերի ճշգրիտ ըմբռնման և նրանց օբիեկտիվ վերարտադրման շնորհք, որից զուրկ է եղել Ահարոնեանի տաղանդը. դա մեր համոզմունքն է։ Այդ է պատճառը, որ Ահարոնեանը չէ տուել և ոչ մի գեղարուեստական լրիւ տիպ։

Այս բոլորից յետոյ աւելորդ չեմ համարում տալ քննադատ Ց. Խանզադեանի ամփոփ բնորոշումը։ «Ահարոնեանը իր երևակայութեան տուած ծաղիկները թափում է անկարգ կերպով իր գաղափարների վրա և փոխանակ կեանք տալու նրանց՝ մեռցնում է։ Նրա գրուածքներում յաճախ կը պատահէք ոչ միայն անբնական գրութիւններ, այլ և արտաքին հակասութիւններ, որովհետև նա բոլորովին մոռանում է իր գեղարուեստական իդէան. նրան միշտ փարոսում է քաղաքական-հասարակական գաղափարը միայն»։ «Կենցաղագրական ընդունակութիւնից բոլորովին զուրկ, նա իր հերոսների համար ստեղծում է բացառիկ, անսովոր պայմաններ, և ույժ չունենալով տրամաբանօրէն զարգացնելու այդ գրութիւնները դիմում է արտաքին ույժերի օգնութեան՝ ստեղծելով արկածների մի սավերջ ձանձրալի շարան, բեմական ամենադատարկ էֆֆէկտներով»։ «Լինելով նեղ ռոմանտիկ՝ նա ծայրայեղ սուբյեկտիվիստ է իր ստեղծագործութեան մէջ, այնպէս որ նրա հերոսների մեծագոյն մասը ինքը հեղինակն է»։ «Եթէ Ահարոնեանին նայելու լինենք, Հայաստանը մի բեմ է (այն էլ արիւնոտ միայն, կասենք մենք. Ս.) և բոլոր հայերս դերասաններ, ֆրանսիական շկօլայի ճոռոմ հռետորներ։ Նա ոչ միայն ինքն է տեղի անտեղի փիլիսոփայում, այլ և նոյնը ստիպում է անել գործող անձանց, ստեղծելով անշունչ, բայց շատախօս խըրտուիլակներ մի անվերջ հօտ»։ «Ահարոնեանը մեր գրականութեան մէջ շարունակում է Աբովեանի և Րաֆֆիի գիծը, միացնելով իր մէջ Աբովեանի լալկանութիւնն ու Րաֆֆիի ռազմական ոգին, սակայն աւելի ողբասաց և լալկան ձևերով։ Անտարբեր մնալով Աբովեանի և Րաֆֆիի ստեղծագործութեան առողջ տարրերի նկատմամբ, նա ժառանգել է այդ գրողներից միայն նրանց թոյլ կողմերը, ստեղծելով մի տեսակ բացասական շկօլա։ Ահարոնեանի գրուածքները ցոյց են տալիս, թէ ինչպէս չը պէտք է մօտենալ արուեստի խնդիրներին»։ Բայց միւս կողմից «Ահարոնեանի գրուածքները միշտ ներշնչված են ամենալայն մարդասիրական զգացմունքներով», նրա համար մարդը բարձր է իր արժանիքով, նրա թափած արիւնը սուրբ է նրա համար։ Բայց չէ որ դա գրուածքի գաղափարական արժանիքն է և ոչ գեղարուեստական։

Այդպէս՝ Ահարոնեանը մեր գրականութեան մէջ ռոմանտիկ է իր ամբողջ էութեամբ։ Ուստի և «րէալիստական մտածողութեան հաստատման հետ պէտք է թուլանայ և Ահարոնեանի ուղղութեան գրողների ազդեցութիւնը»։ Նրա հանդէս գալը անշուշտ մեր իրականութեան արդիւնքն էր։

«Մեր հասարակական կեանքի զարգացման առաջին պայմանը՝ ազգային քաղաքականութեան և ռոմանտիկական մտածողութեան բացասումն է. գեղարուեստական գրականութեան բարգաւաճման գրաւականը՝ Ահարոնեանի ստեղծագործական սկզբունքների ժխտումը»։

Ահա քննադատի խելացի բնորոշումը Ահարոնեանի տաղանդի։

Անպայման ուշադրութեան արժանի, լուրջ և պատրաստված մարդու տպաւորութիւնն է թողնում մի այլ երիտասարդ յօդուածագիր. դա Պ. Մակինցեանն է, որ քննադատել է Աւ. Իսահակեանի բանաստեղծութիւնները։ Այստեղ մենք գտանք Աւ. Իսահակեանի նկատմամբ մեր ունեցած կարծիքի հետ ընդհանուր շփման կէտեր. դեռ անցեալ տարի մի տեղ ասել էինք, թէ «Աւ. Իսահակեանը իր հասարակական իդէալներով մանր բուրժուական, առաւելապէս դեմօկրատիկ խաւերի երգիչ է։ Եւ երբ նա հանդէս է գալիս իր լիբերալիզմի ամբողջ թափով, սիրով ու վշտով, լացով ու ղողանջով և այդ ամենը նա երգում է իր հարազատ միջավայրի մրմունջներով, այն ժամանակ նա գերազանցօրէն բանաստեղծի դերումն է»։

Մակինցեանի անալիզով Աւ. Իսահակեանը հանդէս է գալիս իբրև նացիոնալիստ և մանր-բուրժուական երգիչ։ Իսկ ինչ վերաբերում է նրա «Նիցշէականութեան», այդտեղ Աւ. Իսահակեանը, Պ. Մակինցեանի կարծիքով, առաւելապէս ազդվել է «լոկ Նիցշէի ոճից ու տերմինօլօգիայից, որոնք շատ անգամ աւելորդ բալլաստ են կազմում» բանաստեղծի համար։ Այս հանգամանքը հէնց ի նկատի ունենալով, մենք ընդգծել էինք, թէ «երբ Աւ. Իսահակեանը սկսում է ստրկական նմանողութեամբ յոխորտալ Նիցշէի լեզուով, այնտեղ նա արհեստական է և բռնազբօսիկ»։ Պ. Մակինցեանը երկարօրէն կանգ է առնում Աւ. Իսահակեանի «Աբու լալա Մահարի» պօէմի վրա, ցոյց տալով ի միջի այլոց նրա պատմական սխալները, որոնք ի հարկէ չեն կարող նսեմացնել գրուածքի գեղարուեստական ընդհանուր նշանակութիւնը։ Այդտեղ շատ տեղին է նկատում քննադատը, որ Իսահակեանի «զայրոյթի ու ցասումի այն շանթերը, որ ճայթում են կնոջ, ընկերոջ գըլխին, տեղ-տեղ հայհոյանքի տպաւորութիւն են թողնում»։

> Օ, կնոջ մարմին, պագշոտ, օձաղէն, դիւա-
> կան անօթ չարի, ոճրի,
> Դու, որ մեղքն դառն հաճոյքով խաւար ես
> դարձնում արևը հոգու։
> Ատում եմ կնոջ, համբոյրը նրա, գարշում եմ
> շողոմ, պիղծ զգուանքներից,
> Փախչում եմ նրա ճահիճ-մահիճից և անիծում
> եմ երկունքը նրա...

Արդեօք միջնադարեան ասկետի կեղծ ու պատիր ծածկոցով չէ պարուրվել բանաստեղծը, այս «շանթերը» արձակելիս...

Սակայն բաւական է։

Ալմանախի ներկայ ստուար հատորը մի ըստ ամենայնի օբիեկտիվ աշխատանք է, կօլլեկտիվ ույժերով կատարված։

Լուրջ քննադատութեան ույժով մեր երէկվայ «աբսոլիւտ մեծութիւնները» մի փոքր վայր են իջնում Պառնասի գագաթից և գտնում իրանց արժանիքին համապատասխան տեղերը։

Մենք ջերմագին յանձնարարում ենք այս գիրքը ընթերցող հասարակութեանը, որի համար այժմ անյետաձգելի անհրաժեշտութիւն է կազմում հին արժէքների վերագնահատութեան ամէն մի լուրջ փորձ։

«Գարուն» ալմանախի ներկայ III գիրքը հրատարակել է Արսէն Բուդաղեանը։

Սուրխաթեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մոսկվա, 16 ապրիլ

«Մշակի № 74-ում Ն. Տէր-Մանուէլեան, պատասխանելով Սր. Շահազիզին, ի միջի այլոց ասում է. «Արդէն 5 տարի է, ինչ մեռել է Սմբատ Շահազիզը, և նրա գերեզմանի վրա մի հասարակ փայտէ խաչ անգամ չը կայ,—ահա մերկ, փաստը, որ դըրված է հասարակութեան առաջ և որը վրդովեցնում է նրան»։

Որովհետև անցեալ ամառ Եր. Շահազիզը ինձ էր յանձնել կարգի բերել հանգուցեալ բանաստեղծի գերեզմանը, որ և արել եմ գործակցութեամբ Ար. Թումանեանի, ուստի հարկ եմ համարում ասել, որ Գր. Խալաթեանի թաղման ժամանակ ձիւնի կոյտի տակ չէին կարող տեսնել, թէ ինչ վիճակի մէջ է հանգուցեալի գերեզմանը. իսկ Ն. Տէր-Մանուէլեանի ասածը, թէ հասարակ փայտէ խաչ անգամ չը կայ, իրականութեան չէ համապատասխանում։ Եթէ պարոնը ցանկանում է, ես պատրաստականութիւնս եմ յայտնում նրա հետ միասին գերեզմանատուն գնալ և խաչը անձամբ ցոյց տալ նրան։

Մ. Բարխուդարեան

—

Պեատիգօրսկ, 18 ապրիլ

Կ. Հ. Բ. Ընկ. Պեատիգօրսկի ճիւղի վարչութիւնը հանքային ջրերում 4 ուսուցչի ձրի բժշկվելու իր ստացած արտօնութեան վերաբերմամբ յայտարարում է ի գիտութիւն օգտվել ցանկացողների, որ վարչութեանս պէտք է ուղարկել ծառայութեան դպրոցի հոգաբարձութիւնից ուսուցչութեան վկայական իրանց դիմումի հետ՝ ոչ ուշ քան մայիսի 8-ը։ Թղթերը պատուիրված ուղարկել թիւրիմացութիւնների տեղիք չը տալու համար։

Հասցէ՝ Пятигорскъ. Отдѣленіе Кавказск. Арм. Благот. Общества. Վարչութիւն

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Նրանից յետոյ, երբ Թիւրքիան համաձայնեց յօժարակամ բանալ Դարդանէլը, մեծ պետութիւնները, ի թիւս որոց Ռուսաստանը ևս, հրաժարվեցին պահանջել Բ. Դռնից այն վնասները, որ ստացվեցին նեղուցի փակման ժամանակ։

◆ Օսմանեան գործակալութիւնը հերքում է արտասահմանեան լրագիրների այն տեղեկութիւնը, թէ իբր Ռուսաստանը երկրորդ անգամ պահանջ դրեց Բ. Դռանը Դարդանէլը բանալու մասին։

◆ Գերմանական դիպլօմատիական շրջաններում կարծում են, որ Դարդանէլը բացվեց ժամանակաւորապէս, և Թիւրքաց կառավարութեան այդ զիջումը վերագրում են աւստրո-գերմանական ազդեցութեան։

◆ Անգլիան չափազանց ուրախացաւ, որ Թիւրքիան բացեց Դարդանէլը. Անգլիայում համակրանքը առ Թիւրքիան ուժեղանում է հասարակութեան ու մամուլի մէջ։

◆ Ֆրանսիայում նոյնպէս մեծ գոհունակութեամբ ընդունվեց Դարդանէլի բացումը։

◆ Թիւրքական մամուլը նպաստաւոր տպաւորութիւն ստացաւ կոմս Բէրխտօլդի ճառից։ Համեմատելով այդ Սազօնովի ճառի հետ, «Սաբահը» ասում է. Սազօնովը պատերազմի փող է հնչեցնում, իսկ կոմս Բէրխտօլդը վստահութիւն է ներշնչում...

◆ Մեծ պետութիւնները սկզբունքով վճռեցին նորից գրաւել Կրետէ կղզին միջազգային զօրաբանակով։

◆ Միացեալ Պետութիւնների բոլոր խոշոր կենտրոններում կայացան մեծ միտինգներ մայիսի 1-ի առիթով։

◆ Չինական կառավարութեան 1911 թ. բիւջէն վերջանալու է աւելի քան 200 միլիոն տաէլ դեֆիցիտով։

◆ Արդարադատութեան մինիստր Շչէգլօվիտօվի առողջական դրութիւնը այն աստիճան լրջացաւ, որ բժիշկների խորհրդով նա չէ կարող երկու շաբաթ մեկնել Եալտայից։

◆ Ներկայումս Մոսկվայի բանտերում գտնվում են 5688 տղամարդ և 499 կին։ Բացի դրանից վարչական կարգով բանտակված կան 43 հոգի։

◆ Մոսկվայում Ա. Ֆինկլերը հնարել է մի միջոց, որ արմատապէս ոչնչացնում է պատերի խոնաւութիւնը և պահպանում է պատերը խոնաւութիւնից։ Փորձերը տալիս են շատ փայլուն հետևանքներ։

◆ Սէվաստոպօլում ապրիլի 27-ին կը բացվի գինեգործների համագումար ֆինանսների մինիստրի օգնական Նովիցկիի նախագահութեամբ։

◆ Պարզվում է, որ վերջերս Պեատիգօրսկում վախճանված Պետերբուրգի նախկին քաղաքագլուխ սենատոր Ռատկօվ-Ռաժնովը թողել է աւելի քան 100 միլիոն կարողութիւն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

23 ապրիլ

ԼՎՕՎ։ Լեհ ուսանողների և քաղաքացիների միտինգներում որոշվեց բողոքի ցոյցեր կազմակերպել Լվօվում ռուսական համալսարան հիմնելու դէմ։

ՉԻԿԱԳՕ։ Գործաթող տպարանական բանւորները գործադուլը տարածում են բոլոր այն ձեռնարկութիւնների վրա, որոնք պայմանագրերով կապված են լրագիրների ամերիկացի հրատարակիչների հետ։ Կիրակի օրը լրագիրները լոյս տեսան միայն մի հրատարակութեամբ։

ՏՕԿԻՕ։ Ֆրանս եապօնական բանկ հաստատվելու հետ լուրեր են պտտվում, թէ Եապօնիան պատրաստվում է կնքել 100 միլիօն իէնի արտաքին փոխառութիւն երկաթուղային գործի համար։

Ծպտեալ կերպով եկաւ գերմանացի պրինց Վօլդէմարը։

ԳՕՄԷԼ։ Հանդիսաւորութեամբ բացվեց Գօգօլի արձանը։

ՄՕՍԿՎԱ։ Մաղթանքից յետոյ բացվեց փոքրահասակների դատարանը։

ԵԱԼՏԱ։ Եկաւ բուլղարական ազգային ժողովի նախագահ Դանէվը։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Высочайше Утвержденное Русское Общество Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.
ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.
Ձմերային երթեւեկութիւն
ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ
Մեկնում են Բաթումից
I Պօստային-մարդատար շոգենաւեր.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով
Հինգշաբթի » 1 » » »
Շաբաթ » 12 » ուղղակի »
II Մարդատար շոգենաւեր.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » » »
III Մարդատար-ապրանքակիր շոգենաւեր.
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » » »
Ժամերը Պետերբուրգի են։
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՕՍՏԱՅԻՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի բիօլեռազայի, Մակդօնիայի, Սերբիայի, Անատոլիայի-Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։
ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ-Րիգա, Լիբավա և Րէվել։
Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում, Վելիամինովսկայա փողոց, № 18.
Հեռախօս № 11.
Ընդունվում են եւ ապահովագրվում են ապրանքներ ձեռնտու պայմաններով։
Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց
(Հ.) 0—45

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆԻ—$9^{1}/_{2}$—10 ժ. աչքի, ներքին և ներադային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Գ. Յ. ԳՈՒՐԳԷՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ — 1—2 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—37

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վելեամինովսկայա փողոց, № 8.
(Կ. Հ.) 416. 100—98

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բօրժօմի Հասարակական Ժողովարան
իր վերանորոգած և ընդարձակած շինութեան մէջ առաջարկում է բուֆէտի ստանձնումը մայիսի 1-ից։ Ժողովարանում շաբաթ օրերը նուագում է օրկէստրը։ Պայմանների մասին տեղեկանալ նոյն ժողովարանում։
(Հ.Կ.) 232. 6—6

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ. հրատարակութեամբ ԼՈՅՍ ՏԵՍԱՒ յայտնի վիպագիր հանգուցեալ
ՄՈՒՐԱՑԱՆԻ
Գէորգ Մարզպետունի
նշանաւոր պատմական վէպը, որի նիւթը վերցված է X դարից։
Վէպը առաջին անգամն է լոյս տեսնում առանձին գրքով. գիրքը զարդարված է հեղինակի պատկերով, բաղկացած է 672 երեսից։
Գինն է 1 ր. 20 կոպ.
ՍՏ. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆԻ, «ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ» վերնագրով գիրքը, որտեղ մտնում է «Ճակատին էն էր գրած», «Թաթախումը», «Ախտանքը», «Ցասում», «Բեզ ջնջեցին», «Վաքիլ Բաշին» և «Ուղերձը» աշխատութիւնները . . . . 50 կ.
ԺՈՒԿՕՎՍԿԻ, «Քնած արքայադուստրը», պատկերազարդ հեքիաթ. փոխադր. Աթ. Խնկոյեանի . . . . 15 կ.
Պահեստը՝ Կ. Հ. Հրատ. Ընկ. մօտ։
Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառներին։
Մեր հասցէն՝ Тифлисъ, Кавк. Арм. Издательское О-во, Бебутовская ул.. № 25.
(24,25,28,29) 275. 5—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԿՆԻԿԱՐՄԱՏԻ ՇԱԼՎԱՐԸ
ԿԱՄ ՄՕԴՆԻ ԻՒԲԿԷՆ փորձվիլը,
հեղինակութիւն Ա. ԽԱՑԵԱՆԻ, գինը 20 կոպ.։ Ծախվում է Թիֆլիսում «Գուտտենբերգ», «Կենտրոնական», «Գիր», «Կովկասեան» և «Նոր-Կեանք» գրախանութներում և հեղինակի մօտ՝ Թիֆլիս, Семеновская ул. № 9. Ինձ դիմողները ուղարկեն նաև 15 կոպ. մարկա ճանապարհի և այլ ծախսերի համար։ Գումարով գնողներին հեղինակն անում է 30—50 հատին 25% զեղչ, 50—100 հատին 35% զեղչ, 100-ից բարձր 45%։ Ուղարկվում է նալօժով (անպայման ուղարկել կանխավճար)։ Ծախվում է նաև «Գալստի հիւանդութիւնների բժշկարան», նկարներով ու րեցեպտներով, գինը 50 կոպ.։
(Հ. Կ.) 181. 10—9

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎ ԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրա-
գիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հար-
սանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վր-
ացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառ
Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև
շտապ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել
տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՓՐԷՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տելեֆոն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.